№ 95 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 5

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 5 № 95

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 բ., տասն ամսվանը՝ 9 բ., ինն ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բ., եօթ և վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. և մի ամսվանը՝ 1 բուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բագարատա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Մուտքագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Թիֆլիս քաղաքի ընտրողները հրաւիրվում են Թիֆլիսի քաղաքային վարչութիւն, անուանական յայտարարութիւններ և ընտրողական թերթիկներ ստանալու համար, ցերեկվայ 10—3 ժամը և երեկոյեան 6—10 ժամը։

2. Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեան համաձայն բանուորների լիազօրների հաւաքումը, փոխանակ մայիսի 7-ի, կը լինի մայիսի 14-ին։ (հ.ու.) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԹՈՂԱՎԱՐԱՆ

Ուրբաթ, մայիսի 5-ին, երեկոյեան ժամը 8-ին

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿԸ ԿԱՐԴԱՑ ՀԱՅԵՐԻՆ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

I. Քաղաքական կուսակցութիւնները։ «Ժողովրդական ազատութիւն» կամ սահմանադրա-ռամկավարական կուսակցութիւնը։ Անհրաժեշտութիւնը հայ ժողովրդի համար յարել այդ կուսակցութեան։ II. Աւտօնոմիայի, ֆեդերացիայի և համերկրային լայն ինքնավարութեան խնդիրները։

Մուտքը 20 կոպէկ։

Տոմսակները ծախվում են ժողովարանի վէհյարի մօտ։

(Հ.հ.ու.) (առ) 3—3

Ուրբաթ, մայիսի 5-ին

ԱՄԱՌԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Դերասան Տէր-Դաւթեանը բարեհաճ մասնակցութեամբ սիրողների

տալու է

I ԱՐՋ

Վոդեվիլ 1 գործողութեամբ Չեխովի

II ՁԱՒԵՇՏ

բարեհաճ մասնակցութեամբ տիկ. Մայսուրեանի և ուրիշների։

III ՀԵՏԱՔՐՔԻՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

դեկավարութեամբ մանուկներին։

IV ՊԱՐԵՐ

Նուագելու են զինուորական երաժշտութիւնը և սաղմոսներ։ Ժողովարանը զբօսանքի համար բաց կը լինի ժամը 3-ից

Մուտքը մեծերի համար 30 կ. փոքրերին 15 կ. Իսկ ներկայացման տոմսակները վաճառվում են ժողովարանում։ (հ.ու.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նահերի պաշտպանութիւնը. Առաջին քայլերը. Վերջին տեղեկութիւններ. Խաղաղասէր մարդիկ. Պետական Դումայի նիստերը. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Ի. Լ. Գօրեմըկին. Ազատութեան գործը սկսվում է. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. Ռուսական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

I

Երևանեան և Գանձակի նահանգներում, ուր ապրում են երկու խոշոր ազգային տարրեր—հայեր և թուրքեր, Պետական Դումայի պատգամաւորների ընտրութեան վրա վճռական կերպով կարող են ազդել միայն այդ երկու տարրերը։

Ուրիշ հանգամանքներում, աւելի հաստատուն կենսակցութեան պայմաններում, դուցէ առանձին դեր չը խաղար պատգամաւորի ազգութիւնը, բայց այժմ ազգութեան հարցը գոյութիւն ունի և ընտրութիւնների վրա դնում է առանձին մի դրօշմ։

Կայ և մի ուրիշ հանգամանք, որ ցանկալի է դարձնում իւրաքանչիւր ազգութեան ներկայութիւնը Պետական Դումայում, դա այն է, որ Դուման պէտք է զբաղվի օտարացեղներին և գանազան ազգութիւններին վերաբերեալ մի շարք խնդիրներով, որոնց մասին շատ կարևոր են նոյն այդ տարրերի ներկայացուցիչների կարծիքը և որոշումները։

Եւ անկասկած Պետական Դումայի առաջիկայ պարապմունքների մէջ հանդէս կը գան մի շարք հարցեր վերաբերեալ Ռուսաստանում ապրող ազգութիւններին։

II

Պէտք է արդեօք պահանջել ազգային աւտօնոմիա կամ ինքնավարութիւն, թէ թողնել մասնաւոր ազգային և առաջ մղել ընդհանուր անդրկովկասեան ինքնօրինութեան խնդիրը։ թէ տալ մի ուրիշ կազմակերպութիւն—դրանք հարցեր են, որոնց վերաբերութեամբ անհրաժեշտ են որոշ պատասխաններ՝ ներկայացնելու Պետական Դումայում։

Մեր հարևան վրաց ազգը հանդէս է բերել վրաց աւտօնոմիայի ծրագիրը և մտադիր է պաշտպանել նրան Պետական Դումայում։ Հայերը չեն դրել մինչև այժմ և չեն դնում առանձին ազգային աւտօնոմիայի խնդիր Անդրկովկասում և ձգտում են իրանց բաղդը կապած լինել Անդրկովկասի ընդհանուր վարչական և քաղաքական բարեփոխութիւնների հետ։ Իսկ ինչ վերաբերում է թուրքերին, նրանք որոշ օրգանիզմ առաջ չեն մղել, իսկ նրանց մի քանի հրապարակախօսները համակրութիւն են ցոյց տուել դէպի ընդհանուր անդրկովկասեան ինքնօրինութիւնը, կամ աւտօնոմիան։

III

Մենք բոլորս գիտենք, որ Պետական Դուման զբաղվելու է թէ այդ մեր երկրի համար կարևոր և թէ ուրիշ մեզ համար նոյնպէս էական խնդիրներով, սակայն մենք բաւականաչափ լրջութիւն և եռանդ չենք ցոյց տալիս ոչ դէպի այդ խոշոր հարցերը և ոչ դէպի այն թեկնածուները, որոնցից պէտք է գոյանան մեր ապագայ պատգամաւորները և ուրեմն մեր շահերի պաշտպանները, մեր իրաւերի արտայայտողները Դումայում։

Առանձնապէս մենք կանգ չենք առնի Քութայիսի և Թիֆլիսի նահանգների վրա, որովհետև այնտեղ որոշ հեռաբրքրութիւն են պահպանում դէպի ընտրութեան գործը զանազան խմբերը և այնտեղ համեմատաբար շատ թոյլ է զանազան ազգութիւնների մրցութեան խնդիրը, գոնէ առ այժմ։

Իսկ Երևանեան և Գանձակի նահանգներում, որտեղ տարբեր ազգագրական տարրերը աւելի են խառնվել միմեանց հետ և որոշ հանգամանքների շնորհիւ մի շարք հարցեր խեղդվել էին մինչև այժմ, կարևորութիւն կայ այժմ առաջ մղել նրանց առանձին դիրքով։

IV

Այդ երկու նահանգներից կարող էին ընտրվել երեք հայ և երեք թուրք, կամ Երևանեան նահանգից երկու հայ և մի թուրք, իսկ Գանձակի նահանգից մի հայ և երկու թուրք։

Բայց բաւական չէ միայն, որ այս ու այն ազգութիւնը ունենան ներկայացուցիչներ, կարևոր է, որ դրանք, այդ ներկայացուցիչները լինեն իսկապէս հարազատ ներկայացուցիչներ, իրանց ընտրող ազգաբնակութեան, ճանաչեն երկիրը և ժողովրդին, ուսումնասիրած լինեն կարիքները և կարող լինեն տեղական շահերը պաշտպանել Պետական Դումայում։

Մենք փոխանակ եռանդով աշխատելու և էական գործ կատարելու, փախչում ենք ասպարէզից, ջլատում ենք մեր ոյժերը և վերջ ի վերջոյ անընդունակ ենք հանդիսանում հասարակական մեր պարտաւորութիւնները կատարելու։

Գոնէ այժմ աշխատենք կարելիին չափ ուղղել պակասը և միջոցներ ձեռք առնենք մեր շահերի պաշտպանութեան գործը ապահովելու։

Ա. Քալանթար

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՔԵՐԸ

Վերջապէս, երկար դարերից ի վեր Ռուսաստանի բազմատանջ ժողովուրդը իր ներկայացուցիչների բերանով առաջին անգամ հնարաւորութիւն ունեցաւ պատշաճ, բայց հատատաս, ամուր, տակուն և յարգանք ներշնչող ձայնով ներկայացնել իր պահանջները։

Եւ ժողովրդական ներկայացուցիչների առաջին քայլերը, այն լուրջ, մտածված ճառերը, որ նրանք արտասանում են, այլ ևս ոչ մի կասկած չեն թողնում և կարող են համոզել նոյն իսկ ամենամտնդ սկեպտիկներին, որ ռուսական առաջին ներկայացուցչական ժողովի պատգամաւորները կանգնած են իրանց կոչման բարձրութեան վրա, որ նրանք հաստատ որոշել և վճռել են ժողովրդի կեանքի էական պահանջների վերաբերմամբ ոչ մի զիջումն, ոչ մի կօմպրօմիս չանել կառավարութեան, որ նրանք անշեղ և անսայթաք կերպով առաջ են մղելու այն պահանջները, որոնց իրագործումից է կախված ամբողջ պետական կազմը վերանորոգութիւնը և ժողովրդի համար հիմնական ազատութիւնների ապահովացումը։

Անկասկածութեամբ, բայց ամուր, անյողդող և վճռական ձայնով, ժողովրդական ներկայացուցիչները, առանց քաշվելու, առանց տատանվելու ցոյց են տալիս կառավարութեան այն ուղին, որով պէտք է ընթանայ այսուհետև լայնածաւալ կայսրութեան կեանքը, ցոյց են տալիս, որ շեղվել այդ ուղիից այլ ևս անհնարին է։

Այն երկիւղը, թէ Պետական Դուման կարող է հանդիսանալ ոչ ժողովրդի կամքի իսկական ներկայացուցիչ, որ գիւղացիական և բանւորական դասակարգերի շահերը կարող են չը գտնել նրա մէջ ջերմ և եռանդուն պաշտպաններ, որովհետև այժմեան պատգամաւորները, ընտրված չը լինելով այն ձևով, որ միակ արտայայտիչն է ժողովրդական բուն կամքի և իրաւերի և բացի դրանից բանւորական դասակարգը չունենալով բաւականաչափ ներկայացուցիչներ, կարող են ոչ լիովին պաշտպանել գիւղացիական և բանւորութեան շահերը—պէտք է համարել անհիմն, և, յամենայն դէպս, վաղաժամ։

Վաղաժամ և անհիմն պէտք է համարել այն պատճառով, որ պատգամաւորները արդէն շատ կորուկ և վճռական կերպով յայտարարեցին թէ իրանց գործունէութեան և զբաղմունքի ամենագլխաւոր կէտերը պէտք է կազմեն գիւղական ժողովրդի հողային կարիքը լրացնելու և աշխատաւոր, բանւորական դասակարգի արդար պահանջներին գոհացումն տալու և նրանց վիճակը բարելաւելու հոգսերը։

Եւ եթէ այժմեան Դուման կարողացաւ իրագործել հիմնական ազատութիւնները, գոհացնել եթէ ոչ ամբողջովին, արմատականապէս, գոնէ զգալի կերպով գիւղական ժողովրդի հողային կարիքը և բարելաւել բանւորական դասակարգի այժմեան դժնդակ վիճակը—դա արդէն հսկայական և անհուն պտղաբեր ու արգաւանդ մի գործունէութիւն կը լինի։

Այդ հսկայական աշխատութեան առաջին քայլերը արդէն սկսվել են։ Պատգամաւորները հասկացան ֆրանսիական այն առածի ճշմարտութիւնը, թէ «vouloir, c'est pouvoir» կամենալն՝ կարողանալ է։ Նրանք արտայայտեցին անյողդող, վճռական կամք. նրանք պարզ, մեկին կերպով բացատրեցին ժողովրդի անյետաձգելի պահանջները և ցոյց տուին, որ իրանք եկել են այդ պահանջները իրագործելու միակ նպատակով, որ նրանք չեն հեռանայ ասպարէզից՝ իրանց պահանջածը չը ստացած։

Եւ նրանց առաջին քայլերը ամբողջ Ռուսաստանի կողմից ողջունվում է համակրութեամբ և իրաւախառնքով։

Եւ այդ առաջին քայլերը պարզ ցոյց են տալիս, թէ ժողովուրդը չը սխալվեց, երբ իր շահերի պաշտպանութիւնը, իր բախտի որոշումը հաւատաց այն կուսակցութեան, որ հէնց իր այդ առաջին քայլերով ապացուցեց, թէ նա, իրօք, «ժողովրդական ազատութեան» պաշտպան և ջատագով է։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևան, մայիսի 2-ին

Դարձեալ իրարանցում, դարձեալ անմեղ զոհեր...

Այսօր, երեկոյեան ժամը 6-ից դեռ ևս 10—15 բօպէ պակաս, քաղաքում պայթեց սոսկալի իրարանցում, իրարանցում մի տարուց աւելի սովորական դառած մեր դժբաղդ քաղաքին, մի տարուց աւելի յաճախ կրկնված չնչին, նոյն իսկ անտեղի տեղից։

Խաղաղ քաղաքը մի վայրկեանում աղմկվեց, մի վայրկեանում կերպարանափոխ եղաւ. փախչում էին հայերը, փախչում էին թուրքերը։ Մարդ ապշած էր մնացել. ամբոխային սարսափը քշում հալածում էր ամենքին, հնարաւորութիւն չը տալով նայել շուրջը, հարցնել, իմանալ ինչ է կատարվել և որտեղ։ Շուկան կողոպտվեց։

Այսպիսի իրարանցումները միշտ էլ ունեցել են զոհեր, զոհեր եղան և այս անգամ։ Իրարանցման ժամանակ տեղի ունեցաւ հրաձգութիւն մի քանի տեղերից, բայց ոչ տեղական։ Հրաձգութիւն տեղի ունեցաւ և քաղաքային այդու մօտ, ոչ հեռու ոստիկանատից, ուր և ընկան մի երկու զոհեր։ Առ այժմ յայտնի են թուրքեր 2 սպանված և 2 վիրաւոր, իսկ հայ 1 վիրաւոր։ Թուրք վիրաւորները քաղաքային հիւանդանոցում քննիչին յայտնեցին, որ իրանց խփողը կօզակ էր, իսկ վերջին անգամ սկսեցին հայերի վրա ձգել, այդպէս յայտնեցին վիրաւորները մի քանի թուրքերի այցելութիւնից յետոյ։

Որտեղից սկսվեց, ինչպէս ծագեց այս իրարանցումը, ոչ մի կերպ հնարաւորութիւն չէ լինում իմանալ։ Եւ զարմանալին այն է, որ ժողովրդի մէջ ոչ մի արամադրութիւն չը կայ ընդհարումներ առաջացնելու։ Ընդհարումներից խուսափում են և հայերը և թուրքերը. այս երևանի վերաբերմամբ կարելի է ասել հաստատապէս։ Այսպէս լինելով, ոչ մի կասկած չէ մնում, որ պրովոկացիան ահագին դեր է խաղում։

Դեռ ևս մի երկու շաբաթ առաջ ըստպնվեց մի գօրօդօվօյ հայ. այդ սպանութեան մէջ մեղադրվեց մի թուրք, որի հետ եղել էր, ինչպէս պարզվեց յետոյ, մի օֆիցէր։ Մի շաբաթ առաջ մի քանի ծպտեալ մարդիկ փորձեցին խեղդամահ անել մի այլ գօրօդօվօյի—դարձեալ հայ—սակայն որին օգնութեան հասնող մի այլ գօրօդօվօյ բռնեց նրանցից երկուսին, որոնք յայտնվեցին զինուորականներ հագուստները փոխած։ Այս դէպքերի մասին գրվեց լրագրերների մէջ։

Պրովոկացիայի համար մեծ հող ներկայացնում էր վերջին օրերս մի այլ հանգամանք։ Մի շաբաթից աւելի է ինչ Երևանի ժողովրդի մէջ յամառ կերպով տարածվում էր մայիսի 1-ին իբր պատրաստվող մի մեծ ցոյցի լուրը։ Այդ լուրը սոսկում էր առաջ բերել թէ հայերի և թէ թուրքերի մէջ։ Սոսկում՝ գլխաւորապէս ի նկատի առած հայ-թուրքական ընդհարումների հնարաւոր լինելը։ Որպիսի ցոյց էլ որ լինէր, որպիսի բնաւորութիւն էլ որ նա կրէր, այնուամենայնիւ պիտի բերվեր կապվեր հայ-թուրքական ընդհարումների հետ։

Մայիսի 1-ը անցաւ. ցոյց տեղի չունեցաւ։ Մայիսի 2-ն էլ, գոնէ երեկոյեան ժամը 6-ը, խաղաղ անցաւ, չը նայած որ այդ օր քաղաքում հայ և թուրք խառը՝ երկու անձանց ընտրութիւն էին կատարում Պետական Դումայի պատգամաւորական ընտրութեան ժողովին մասնակցելու համար։ Եւ անա այդ բոլորից յետոյ իբրև կանոնաւոր

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏը
Սեփական թղթակից

—

Ապրիլի 30-ին Պետական Դումայի նիստի սկզբում կարդացվեցին մի շարք շնորհաւորական հեռագիրներ։ Նախագահը յայտնում է, որ նրան ներկայացրել են երկու առաջարկութիւն, որոնք պէտք է կարդացվեն ու քննվեն, եթէ միայն պլատը հաւանութիւն կը տայ։ Այդպիսի կարգ կը պահպանվի և այսուհետև, այսինքն՝ մինչև հերթական հարցերը սկսելը, կը կարդացվեն նախագահին ներկայացրած այն առաջարկութիւնները, որոնք անյետաձգելի են։ Այսօրվայ առաջարկութիւնները արել են Դումայի անդամներ՝ Մոսկվայի նահանգի գիւղացի Վասիլի Զիրիկով և բժիշկ Կոնիլով (Վիտեպսկ նահանգի, ձախակողմ.)։ Երկու առաջարկութիւնների միտքը միատեսակ է. նախ քան հերթական հարցերին դիմելը, հարկաւոր է թագաւոր Կայսրին հեռագրել ու խնդրել անյապաղ ազատել քաղաքական, զինուորական և ազգարարական գործերի համար բոլոր կալանաւորներին։ Քանի չը կայ ամնիստիա, անկարելի է սկսել սովորական պարապմունքները, անկարելի է մեկ կանգիստ, երբ դեռ քանտրումն են ազատութեան առաջաւոր մարտնչողները։

Կօրնիլովը նոյնպէս պահանջում է անյապաղ իրագործել ամնիստիան։ Երէկ Դուման այդ առիթով մի շարք որոշումներ կայացրեց, բայց այդ հարցերի լուծումը կարող է ձգձվել երկար ժամանակով, մինչդեռ երկիրը չափից դուրս տանջվում է և չէ կարող հաշտվել ամնիստիայի յետաձգման հետ։ Դուման պէտք է անյապաղ գործադրէ կեանքի մէջ իր ցանկութիւնները և իրագործէ իր անդրվզելի կամքը կամ,—որ ի հարկէ միևնոյն է,—ժողովրդի կամքը։ Այդ պատճառով թող Դուման իր նախագահի միջոցով յայտնէ Թագաւոր Կայսրին իր կամքը իրագործելու ամնիստիան այն բոլոր յանցանքների վերաբերմամբ, որոնք կատարվել են ժողովրդի բարքը ի նկատի ունենալով և մանվան պատիժը վերացնել այսուհետև, մինչև որ այդ առիթով նոր օրէնք կը հրատարակվի։ Այդպիսով, ամնիստիայի հարցը նորից հերթական դարձաւ, և պատասում նորից սկսվեցին վիճաբանութիւնները այդ հրատապ հարցի առիթով, որը այնքան հիանալի ու միահամուռ կերպով վճռվել էր երէկ։

Վիճաբանութիւնների սկիզբը դրեց պրոֆեսոր Շերենեվիչ (Կազան), որին պատկանում է նոյնպէս «կօնֆլիկտ» խօսքը արտասանելու առաջնութեան պատիւը։ Ամնիստիայի հարցի անյապաղ լուծումը սպառնում է, ճառախօսի կարծիքով, «կօնֆլիկտ» առաջացնելու։ «Մենք պատրաստ ենք ընդունելու կօնֆլիկտ, բայց մի հարց՝ ինչպիսի կօնֆլիկտ։ Մենք ասացինք մեր խօսքը, և ամենքը, ովքեր ականջներ ունեն, Ռուսաստանում այդ խօսքը կը լսեն ու կիմանան, հեռատեսս, մենք մեր զործը կատարել ենք։ Ուրեմ ինչ մեզ էլ կայցնելու լինենք,—հեռագիր կուղարկենք, թէ պատգամաւորութիւն,—կօնֆլիկտը անխուսափելի է։ Արդարև, ինչ կը լինի մեր դրութիւնը, եթէ բոլորովին չը պատասխանեն ոչ նրան և ոչ միւսին կամ թէ բացասական պատասխան տան։ Այնուհետև մենք ինչ կարող ենք ասել, մինչդեռ այնքան բան պէտք է ասել։ Միմիայն ամնիստիայի համար խօսք չէ մեզ ուղարկել այստեղ ժողովուրդը։ Ապա ուրեմն, կօնֆլիկտը անխուսափելի է, սակայն նա ցանկալի է, արդեօք, այդ հոգի վրա։ Ժողովուրդը, մեզ Դումա ուղարկելով, պահանջում էր մեզանից, որ մենք տանք նրան հոգ և ազատութիւն։ Կարող է, արդեօք, Դուման ցրվել, առանց կատարելու ժողովրդի այդ հիմնական պահանջները։ Ամնիստիան դեռ ևս բոլորը չէ, և եթէ մենք միայն նրան ձեռք կը բերենք, մեր ընտրողները գոհոն կը մնան։ Զը պէտք է թաքցրնել, որ մենք և կառավարութիւնը, այդ ուղղակի երկու իրար հետ թշնամի կողմերն են։ Պատերազմը կարող է սկսվել ամեն մի բոպէ, և ընական է, որ իւրաքանչիւր կողմը աշխատում է ամենաշատէշտ վայրկեանը ընտրել կռւի համար, իսկ կառավարութեան համար, գուցէ այժմ աւելի յարմար է ատիպելու մեզ ընդունելու կռիւը հէնց այժմ։ Կրկնում եմ, մենք կօնֆլիկտից չենք վախենում և նրանից չենք էլ խուսափելու, բայց մենք պէտք է նախ և առաջ համոզվենք, որ ամբողջ ժողովուրդը անպայման մեզ հետ է և մեզ չի պարսաւի, որ ամենազլխաւորն է։ Այժմս մենք վանդում ենք ժողովրդի ամենաթանգագին բարիքը, իսկ յետոյ մենք արդէն վանդելու ենք միայն մեզ։ Մեզ համար անհրաժեշտ է, որ մենք կանգ առնենք մեր երկվայ որոշման վրա։ Զը դնենք հարցը սուր կերպով, որպէս զի ժողովուրդը միշտ լինի մեր կողմը։

Հայր Տրօռանը (Վիտեբսկի նահանգից) ամնիստիան անյապաղ պահանջելու կողմակից է և միևնոյն ժամանակ խնդրում է ասելու, որ երկիր մոռացան պատժէլ զօրամասերի և խարազանների մասին խօսել, որոնք մինչև այժմ էլ զուարճանում են գիւղացիների մէջքերի վրա։ Ես ուղարկված եմ այն նահանգից, որտեղ ազգարնակութիւնը մինչև այժմ էլ լողում է արեան մէջ, որտեղ բանտերը լցված են գիւղացիներով և այն էլ զրպարտութեամբ։ Ճառախօսը խնդրում է գաւական ճառին իբրև պատասխան ուղղված ուղերձի մէջ մտցնել բոլոր պատժական զօրամասերը հեռացնելու և զինուորական դրութիւնը վերացնելու այն տեղերում, որտեղ նա գոյութիւն ունի, պահանջը։

Սավելիևը (Մոսկվայից) ասում է, որ նա, իբրև բանւոր, քաջ ծանօթ է գալիք օրվայ տրամադրութեան հետ։ Մայիսի 1-ի պատճառով թէ Մոսկվայում և թէ այստեղ ամենուրեք կախված են թռուցիկներ նախազգուշացնելու, որ միտինգները, ցոյցերը և ուրիշները չեն թոյլատրվելու, մինչդեռ, Սավելիևի համոզմունքով, միտինգները ամեն տեղ էլ լինելու են, և միտինգներից յետոյ առանձին բանւորական խմբեր պատրաստվում են ցոյցեր սարքելու։ Նրանց ընդհանուր կոչն է «ամնիստիա բոլոր կալանաւորների համար, նամանաւանդ բանւոր ընկերներին»։ Անկասկած ընդհարումներ տեղի կունենան և նորից արիւնը կը թափվի։ «Ցնչեցնում եմ,—ասում է Սավելիևը,—որ զուրկ այլապէս չէք կարող հանգստացնել բանւոր դասակարգին։ Անհրաժեշտ է շտապեցնել խնդիրը կամ պահանջը, բայց և անհրաժեշտ է իսկոյն և եթէ համակրութիւն յայտնել բանւոր դասակարգին»։

Գրեդեսկուլը միանում է այն կարծիքին, որ անհրաժեշտ է շտապել ամնիստիան յայտնելու։ Այլ ևս սպասել անհնարին է, և այժմ աւելի քան երբ և իցէ հասկանալի է այդ ցանկութիւնը։ ազատել կալանաւորներին, այն բոլորից յետոյ, ինչ որ ճաշակել է նա Զատկի մեծ տօնին, բանտի մէջ ակնկալութեան չարաչանչ րոպէներում։ Բոլոր 200 հոգին սպասում էին ազատութիւն յայտարարելու րոպէներին, և եթէ տային այդ ազատութիւնը այն ժամանակ, դա աւելի լաւ կը լինէր։ Ի հարկէ, այժմ էլ հարկաւոր է շտապել։ Լաւ բան են արել նրանք, որոնք մտցրել են այս երկու առաջարկութիւնը, բայց ամբողջ պլատը չէ կարող և չը պէտք է ընդունէ այդ առաջարկութիւնը։ Այդ նոր յայտարարութեամբ մենք ոչինչ չենք աւելացնել այն բոլորի վրա, որը դուրս է եկել մեր սրտից, իբրև տանջված հոգու ուրախութեան ազաղակ։ Մի և նոյնն է, անյապաղ հետևանքի մենք չենք հասնի, ուստի բաւականանք միայն մեր որոշումով։ Պլատը այդ հարցին ուլտիմատումի ձև չը պէտք է տայ, որ կարող է դիւրացնել ցանկալի պատասխանը։ Միայն թէ մի քանի օրվայ ընթացքում մենք պէտք է սպասենք։ Անհրաժեշտ է այդ բանը անել, որպէս զի պատմութեան առաջ խուսափենք պարսաւանքից»։

Կոմս Գէյդենը հակառակ է այնպիսի զարձվածների, ինչպիսին է «կուռ բռնվել», «պահանջել», իշխանութեան դէմ ուղղված այդպիսի սպառնալիքների դէմ։ Ամնիստիան Բարձրագոյն Իշխանութեան իրաւասութիւնն է, և միայն յարգանքի ձևով պէտք է առաջարկվեն Պետական Դումայի յայտարարութիւնները (ծափահարութիւններ ա՛ջակողմում)։ Ճառախօսը կանգ է առնում միևնոյն մտքի վրա, որ հարցը չը պէտք է վերսրեն լուծելը։ Երէկ արվեց այդ առիթով բոլորովին ուղիղ որոշում, և միայն պատասխանի ուղերձի մէջ մտնելով կարելի է նրան իրագործել, ապա թէ ոչ հարկ կը լինէր կազմել նոր օրէնքի նախագիծ, որի վրա հանդիպի մեծ դժուարութիւններ։ «Եւ մեզ էլ վերին ատիճանի դժուար կացութեան մէջ կը դրնենք,—շարունակից ճառախօսը,—մենք պէտք է յետաձգենք բոլոր միւս մեզ յուզող հարցերը ու այդպիսով կը ստեղծենք աւելի ևս սարսափելի կօնֆլիկտ, կօնֆլիկտ ժողովրդի հետ։ Եւ արդարև, մի՞թէ մեզ ուղարկել են այստեղ միմիայն ամնիստիայի համար ցանկութիւն յայտնելու։ Զէ կարելի սխալ մոռացութեան տալ բոլոր միւս հարցերի կարևորութիւնը։ Ես պնդում եմ, որ անհրաժեշտ է արտայայտել բոլոր հարցերի մասին միաժամանակ»։

Ժիլինը միանգամայն ըմբռնում է իր ընկերներին, որոնք մտցրել են այդ առաջարկութիւնը և գիւղացիներին, հէնց այն գասակարգերին, որոնց մէջ մեծամասնութիւնը կենդեղող է։ Բնական է, որ նրանք ուզում են որքան կարելի է շուտ թաչել բոլոր ձեակնութիւնների վրայից։ Զէ որ, զուրս գալով այստեղից, նրանք ընկնում են մի այնպիսի սարսափների մէջ, որտեղ նրանց ամեն մի քայլափոխում յետոյում են հարցերով—հապա ինչ էք անում զուտ այնտեղ։ Երբ պէտք է երևան հետևանքները։ Ճառախօսը առաջարկում է անյապաղ աշխատել ամնիստիայի մասին, բայց և, միևնոյն ժամանակ, հեռացել բոլոր հարցերի մասին հոգալ իսկոյն։ Նա աղերսում է խմբագրական մասնաժողովին յաջորդ օրը ներկայացնել ուղերձի նախագիծը։

Իմշենեցկին առաջարկում է վերջ տալ վիճաբանութիւններին և ընդունել իր մշակած ֆորմուլան հերթական գործերին անցնելու համար։

Մ. Կովալևսկի.—«Ես այդ հարցի առիթով դէմ եմ վիճաբանութիւնների վերջ տալուն, որովհետև ինձ թւում է, որ կարելի է հաշտեցնել բոլորին։ Մենք այստեղ հանդիպանում ենք իրրև միջնորդներ Միապետի և ժողովրդի մէջ և պարտաւոր ենք յայտնել Նրան ի գիտութիւն, որ շատ մեծ վտանգ է սպառնում, որ նոր զոհեր լինելու երկիրզ կայ։ Իրաւունք ունենք մենք սպասելու թէկուզ մի բոպէ անգամ, եթէ նոր վտանգի առաջը կարելի է առնել ներումն շնորհելու ակտով։ Առաջարկում եմ տեղեկացնել Նորին Կայսերական Մեծութեան մեր նախագահի միջոցով Դումայի միաձայն ցանկութեան մասին, որպէս զի Թագաւոր Կայսրը օգուտ քաղէ ներումն շնորհելու իր իրաւունքով և ազատ անմիջապէս կալանաւորներին։

Ի. Պետրունկևիչ.—«Մենք չենք ուզում միջնորդ բարեխօսներ լինել, այլ օրէնսդիրներ»։

Քուէարկվում է Բիժկովի առաջարկութիւնը վիճաբանութիւնները վերջացնելու մասին, որը ընդունվում է միաձայն։ Հարց է տրվում թերթիկներով 33 հոգի ընտրելու գասական ճառի պատասխան-ուղերձը կազմող մասնաժողովի համար։ Մի ժամ ընդհատումից յետոյ յայտարարվում է քուէարկութեան հետևանքը։ Ընտրվել են ձայների մեծամասնութեամբ. Պետրունկևիչ (Տվէր), Վէնավեր, Նաբոկով (Պետերբուրգ), Բոդիչև (Պետերբ.), Կոկօշկին (Մոսկվա) Ալադին, Անիկին, կոմս Գէյդեն, Կուզմին-Կարավայէվ և ուրիշներ։

Պեսական Դում։ (Շարունակութիւն)։ Առաջին խօսում է Սէմենովը, որը յայտնում է թէ անհրաժեշտ է շեշտել ուղերձի մէջ երկրի տրամադրութիւնը։ «Ինձ այնպէս է թւում, որ ուղերձը կազմված է ոչ բաւարար վճռողական խօսքերով, բաւարար հիմնաւոր չէ մեր պահանջների պատճառաբանութիւնը։ Ես աւելի փափուկ խմբագրութեան կողմակից եմ, բայց պատճառաբանութիւնը պէտք է աւելի խորը լինի։ Ուղերձը Դումայի մէջ եղող զանազան կուսակցութիւնների քննութեան արդիւնք է, որոնք միջակ պահանջների բնաւորութիւն են կրում։ Անկասկած է նոյնպէս, որ Դումայի մեծամասնութիւնը տուել է նրան մի յայտնի գոյն։ Մենք պարտաւոր ենք մոռացոյց անել ժողովրդի տրամադրութեան վերա, նրա ցանկութիւնների վրա, որոնց մասին խօսում է ուղերձը։

Երէկ ասուել էին, որ ուղերձը արտայայտում է ռուս ինտելիգենցիայի մի յայտնի մասի ցանկութիւնները, որ այդ ցանկութիւնները ամբողջ ժողովրդի ցանկութիւնները չեն։ Ի զուր են այդպէս ասում, այդպէս մտածում։ Ռուսաց ինտելիգենցիան երբէք ժողովրդի ցանկութիւնների հակառակ չէ եղել։ 30 տարի իր փառաւոր դերքի վրա կանգնած ռուս հրապարակախօսի բերանով նա յայտնեց, որ աւելի լաւ կը համարէ հրաժարվել քաղաքական պահանջներից, քան կը հեռանայ ժողովրդից։ 40 տարի առաջ հնչած «հողը և ազատութիւնը» պայմանաբանը այժմ բոլորի մարտական կոչն է դառել։ Ազատութիւնը նոյնպէս հարկաւոր է ժողովրդին որպէս և հողը։ Մեզ հանապարհ էին գցում ընտրողները, անցնելով յաճախ այդ նպատակով տասնեակ վերստեր, մեզ ասում էին ժողովներում. «Ձեռք բերէք մեզ համար ազատութիւն, որովհետև առանց ազատութեան մենք չենք կարող մեր ձեռքում պահել հողը։ Դա քիզաղա չէ, այլ խորը հասունացած պահանջ։ Ի զուր է Գէյդենն ասում, որ մենք յափշտակվում ենք, իբրև հողի վրա չենք կանգնած։ Ոչ, հողը, որի վրա ստեղծվել են պահանջները, աւելի խորը և հեռու է գնում, քան թէ մեր պահանջողներն են, իսկ գիւղացի և ամօթալի պատերազմը բոլորի աչքերը բացեց։ Սառերին գիւղացիութեան վիճակվեց տանել իր ուսերի վրա մի շարք աբիւնահեղ ներքին կռիւներ և գժբաղդութիւններ, երկիրը պատգ հրդեհը այնքան մեծ է, որ բաւական են կայծեր, որպէս զի բոցերը զոյանան, բաւական է մի ընդհարում, մի անբերրութիւն մի որ և է տեղում—և կը սկսվին սարսափելի դէպքեր։ Իրաւանչիւր օր տեղեկութիւններ են ստացվում, մի անգամ Ցարիցինից, միւս անգամ Վոլոգդայից կամ Մոսկվից ամեն տեղ արիւն է, ընդհարումներ։ Դա չի վերջանայ նոյնքան ժամանակ, մինչև որ չիրագործենք կեանքի մէջ այն՝ ինչ պահանջում է ժողովուրդը։ Ասենք են որ և է յաջողութիւններ կէս ճանապարհի վրա։ Ռուս ժողովուրդը մինչև վերջը կը հասցնի աշխատանքը և կը ստանայ այն, ինչ որ ցանկանում է։ Դա կուրացրած Սամսոնն է, որի մազերը մեծացել են, և եթէ չը կատարեն նրա պահանջները, նա կարող է խորտակել ամեն ինչ և շինութեան բեկորների տակ թաղել թէ իրան և թէ իր ճնշողներին։ Երկերը բռնված է յուզմունքներով։ Չէ կարելի զիմել որ և է միջին ճանապարհների։ Գիւղական ժողովուրդը իրական միջոցներ է պահանջում։ Կան որոշ ժամանակներ, երբ պարլամենտական ռէժիմի իրագործումը կարող կը լինէր, լաւ պետական կեանքի (?) արխարների վրա։ Չեն ցոյց տրված Դումայի օրէնսդրական նախաձեռնութիւնը և պետիցիայի իրաւունքը, չէ յիշված, որ Պետական Խորհուրդը միմիայն բարձր վարչական հիմնարկութիւն է և ոչ թէ օրէնսդրական, չէ յիշված միևնոյնների գործողութիւնների վրա բաւարար կօնտրոլ ունենալու անհրաժեշտութիւնը։ Իր ճառի վերջում Կովալևսկի առաջարկեց մտցնել ուղերձի մէջ այն յիշատակութիւնը, որ Պետական Դուման ձգտում է դէպի միջազգային խաղաղութիւն, ուզում է իր գործունէութեանը այնպիսի ուղղութիւն տալ, որ կեանքը հնա՛ զանազան հոսանքներով՝ բայց մէկ ուղղութեամբ։ Կովալևսկու ճառին ծափահարում էին անընդհատ։ Ժամը երկուսին յայտարարվեց ընդմիջում։ Նիստը վերսկսվեց 3 ժամ 20 րոպէին։ Խօսքը տրվում է Գիլիայի եպիսկոպոս բարոն Բօռոնին, որը մասնայոյց արեց, որ ինքն Աստուած սահմանադրութիւն է տուել աշխարհին ասած պատգամների ձևով, և խնդրում էր Դումայից մի քանի խօսքեր աւելացնել ուղերձի մէջ, որոնք բնորոշում են զանազան դասակարգերի, ազգութիւնների և դաւանութիւնների դէպի միմեանց ունեցած քրիստոնէական սէրը։ Բօռնի ճառը շարունակվում է։ Սեգէլնիկով (Օրէնբուրգ) ասաց, որ անհրաժեշտ է ուղերձի մէջ յիշել կազակների մասին՝ նրանց քաղաքացիական և զինուորական իրաւունքները մեռցած գիւղացիների հետ հաւասարեցնելու մասով։ Սեգէլնիկով առաջարկեց շնչել, որ անհրաժեշտ է Սիբիրի հնաբնակների այն է կիրգիզների և բաշկիրների հողերի բաբեկարգութիւնը, որոնց հողերը անարդարաբար տրվում են գաղթականներին։ Գուսոչկին (Սիմբիրսկ) ասեց, որ երբ հնչվեց փրկարար լուրը հոկտեմբերի 17-ի մանիֆէստի մասին, ժողովուրդը ցնծում էր, բայց ուրախութիւնը վաղամեռ էր։ խաւար այժերը մթնացրին նրան, հոսքերն արատաւոր գեներ, կուսակցից անչափ զանազանութիւն։ Նոյնիսկ ուրախութեամբ ընդունեց ժողովուրդը Թագաւորի գահական ճառը, սակայն այժմ ևս հնարաւոր է հիասթափութիւն, այնուամենայնիւ Դուման պէտք է ընթանայ ստեղծագործական աշխատանքի նոր ճանապարհով, պէտք է կորզել Թագաւորին բարձրատրման պաշտօնական ելոյթի ձևերից, պարտաւոր է ասել Թագաւորին, որ միայն ժողովրդի հետ միացած հնարաւոր է աշխատել հայրենիքի բարօրութեան համար։ Կոռնիլովսկին ասեց, որ եթէ պատասխան ուղերձի մէջ կան պակասութիւններ, դրանք էական չեն, որովհետև ուղերձի գլխաւոր արժանաւորութիւնը նրա հեղինակաւորութիւնն է, որպէս մի ակտ, որ բղխում է ժողովրդական ներկայացուցչութիւնից։ Լօշկով (Պետերբուրգ) ասեց, որ Դումայի ուղերձը կը-լում է ժողովրդի բոլոր դասակարգերը տարբերութիւնից ոգին, մատնացոյց արեց, որ անհրաժեշտ է մի քանի լրացումներ մտցնել ուղերձի մէջ, մատնացոյց արեց կանանց հաւասար իրաւունքներ տալու անհրաժեշտութեան վրա, ապա ասեց թէ անհրաժեշտ է կատարեալ և անպայման ներումն շնորհել Նիստի ընթացքում Դուման որոշից, որ հանցաւորների ճառերը ուղերձի հարցի մասին տեւեն ոչ աւելի քան հինգ րոպէ։ 7 ժամ 10 րոպէին յայտարարվեց ընդմիջում մէկ և կէս ժամով։—Կուռսմանով (Կուրսկի նահանգից), մատնացոյց անելով, որ բանութիւնները շարունակվում են, ասեց, որ աւելի էլ մեծ վրդովմունք է հարկաւոր, աւելի շատ ցուցմունքներ պէտք է անել թէ ինչ է կատարվում երկրի մէջ։ օրինակ ամնիստիայի հարցի վերաբերմամբ ասում են, որ բանտերում փակվածները և Սիբիրի աքսորավայրում հեծողները, տարիներ նստելուց յետոյ, կարող են էլի մի քանի ամիսներ նստել։ իսկ գիտէք դուք արդեօք, ինչ է կատարվում այժմ։ Եկատերինօսլավից հեռագրում են, որ 30 բանտարկեալներ, որոնք երգեր էին երգում, որակոտոր են արված, Ցարիցինում վիրաւորված են բանւորներ, որոնք երգ էին երգում։ Երբ կաբինետը փոխված լինէր և նոր մինիստրներ փոխարինէին բոլոր չինովնիկներին, ոստիկանութիւնը և ժանդարմերիայն, այն ժամանակ շատ կարելի է փոփոխութիւններ հնարաւոր կը լինէին։ Առաջարկում եմ Դումային հեռևեալ լրումն մտցնել ուղերձի մէջ. «Դուման ստիպողական անդեռաձգելի անհրաժեշտութիւն է համարում հասարակական և անձնական ապահովութեան վերականգնումը, որ այժմ գոյութիւն չունի։ հոկտեմբերի երկրորդ կէսից Զերդ Մեծութեան բոլոր հպատակները մատնված են ոստիկանութեան իշխանութիւնը և պաշտպանական ծառայութիւն կատարող զինուորական մասերին։ կողոպտումները և աւարառութիւնները բազմապատկվում են օրից օր»։ Հանօրեն առաջարկում է հիմնել զեմստվոյին և քաղաքային ընտրեալ կոմիսիաներ, զինելով նրանց տրամադրութեան տակ զինաւորված ազգաբնակութիւնը։

Մինչև այժմ կառավարութիւնը հրատարակել է օրէնքներ հիմնվելով ռեգական ոստիկանութեան, ժանդարմերիայի և լրտեսների տեղեկութիւնների վրա։ Այսպէս ներկայ մինիստրները լսելով Ռուսաստանի բոլոր ծայրերից ժողովված ժողովրդի ներկայացուցիչների միաձայն արած ազգարարութիւնները, կը հասկանան, թէ ինչպիսի միջոցներ են հարկաւոր՝ երկիրը խաղաղացնելու համար։ Ինձ ընտրող գիւղացիները։ Ճանապարհ ձգելով ասում էին. «Գնա, պաշտպանիր, հոգ, ազատութիւն և իրաւունք պահանջիր։ Եթէ Դուման հէնց այժմ և եթէ չի զբաղվի այդ հարցերի լուծմամբ, մենք ինքներս գիտենք վերցնել այն, ինչ որ մեզ հարկաւոր է»։ Ժամը 9¼-ին նիստը վերսկսվեց։ Ընդմիջումից յետոյ քուէարկվում է ամբողջ ուղերձը և առաջին իսկ կարծիքով միաձայն ընդունվում է։ Ապա նախագահը քննութեան է առաջադրում զեկուցումները։ Բոդիչևը խօսք է խնդրում և դիմում է Դումային, խնդրելով ժամանակ չը կորցնել ուղերձի յօդուածային քննութեամբ։ Նախագահը ընդհատում է նրան, ասելով, որ դա հակասում է ներկայ կանոններին։ Կոմս Հէյդէնը բողոքում է Բոգիչևի ասածի դէմ և խնդրում է ոչ պակաս չը խանգարել պարզանվելու։ Դուման անցնում է յօդուածային քննութեան։ Կարդացվում է նախագծի առաջին մասը—մինչև «կոչ» խօսքը։ Այդ մասում մտցնում է եղկոս ուղղութիւնը։ մէկը—Դումայի անդամ Զաբօլօտովինը, որ առաջարկել էր «ընդհանուր ընտրողական իրաւունքի հիմունքներով» խօսքերին աւելացնել «առանց սեռի խտրութեան» խօսքերը, երկրորդ ուղղումը—հէնց մատնաժողովի ձեռքով արած։ Զաբօլօտովի առաջարկում է կրկին աւելացնել «ուղղակի, հաւասար, գաղտնի ձայնատուութեան հիմունքներով, առանց ազգի և կրօնի խտրութեան» խօսքերը։ Առաջինը խօսում է Ակիկինը (Սարատովից), որը պաշտպանում է ուղերձը ուղղելու—քառանդամ ֆորմուլայով, որի համար պատասխանում և փոփոխվում նամատակվեցին այնքան մարդիկ։ Նա յայտնում է, որ Դումա գալով նա մտածում էր, որ քառանդամ ֆորմուլան տրված է ժողովրդին թիւրիմացութեամբ, բայց այսօր պարզվում է, որ չեն տալիս նոյն իսկ յանցաւորը վերահասութեամբ։ Նախագահը ընդհատում է հռետորին, որը յետ է վերցնում «յանցաւոր» խօսքը։ Մի քանիսները ծափահարում են, իսկ միւսները ազաղակում են «բուական է»։ Մատնաժողովի զեկուցող Նաբոկովը պարզում է, որ մատնաժողովը աչքի առաջ չէ ունեցել մերժել քառանդամ ֆորմուլան և աշխատել է այնպէս ձևակերպել, որ միացնէր ամբողջ պարտը, որի համար և մատնաժողովը խուսափել է այդ ֆորմուլան մտցնել ուղերձի նախագծի մէջ։ Ուղղելու առաջարկութեան հեղինակ Զաբօլօտովին (Պոզոլսկ) յայտնում է, որ նա չէր երևակայում, որ ժողովրդի գործը զանվում է այնպիսի վտանգի մէջ, որպիսին ինքը տեսնում է Դումայի մեծամասնութեան արտադրութեան մէջ և որն ձայնատուութիւնից երևում է, այս մեծամասնութիւնը հակառակ է քառանդամ ֆորմուլային։ Նա ներկայացուցչէ Զմել գիւղացիների, որոնք միաձայն պահանջել են այդ ֆորմուլան։ իսկ ինչ վերաբերում է կանանց, Ռուսաստանի ազգաբնակութեան 70 միլիոն կանայք անկասկած կողմակից են քաղաքական իրաւունքներ տալուն։ Աւելացնելով այդ թէ վրա բարենորոգման կողմակից տամարդկանց, կերևայ, որ ահագին մեծամասնութիւնը կամենում է ոչնչացնել կանանց ստրկացուցչ տարկութիւնը։ Իշխան Շախովսկին գանում է, որ ըստ էութեան, ընտրողական օրէնքի առիթով եղող վիճաբանութիւնները կանխաժամանակեալ են։ Այժմ քննվում է ուղերձը միայն, որի գլխաւոր նպատակն է մտցնել պալատին մտիմայն մի ցանկութեան մէջ, որի համար և առաջարկում է ընդունել մատնաժողովի խմբագրած ուղերձի առաջին կէսը։ Նաբոկովը միանում է Շախովսկու կարծիքի հետ։ Լօմշակովը պաշտպանում է Զաբօլօտնու ուղղումը։ Կրուզլիկովը (Վօրոնէժի նահանգից) իր յայտարարութեամբ մեծ ազդեցութիւն է գործում։ ասելով, թէ ինչպէս գիւղացին ընդունում է, որ կանանց գործունէութիւնը լինելու է միայն ընտանիքի մէջ և պնդում է որ հէնց իրանք—գիւղկուսիները չեն ցանկանում քաղաքական իրաւունքներ։ Զաբօլօտնին կրկին բարձրանում է տեղից և պաշտպանում է իր առաջարկը և հաւատացնում է, որ գիւղացիութիւնը գլուխը կը կորցնի, իմանալով, թէ ինչպէս վերաբերվեցին դէպի իր իրաւունքները այն ընտրեալները, որոնք Դուման են ուղարկված ոչ ուղղակի, և ոչ էլ հաւասար ձայնատուութեամբ։ Եթէ ձայնատուութիւնը քառանդամ ֆորմուլայով կատարվէր, այն ժամանակ այստեղ կը լինէին գիւղացիների կողմից ոչ թէ 150, այլ 500 ներկայացուցիչներ. և գիւղացիները կը քուէարկէին միաձայն իրանց հետաքրքրող հարցերը։ Դրա դէմ բողոքում է կոմս Հէյդէնը. նա ասում է. «Իմ նահանգի ընտրողների մեծամասնութիւնը գիւղացիներ էին, իսկ ընտրեցին ինձ։ Այդ պարզ ապացոյց է, որ գիւղացիութիւնը Դումայում մեծամասնութիւն է կազմում»։ Մեկլաշէվսկին, ասում է, որ թէև ինքը ժողովրդական ազատութեան անդամ է, բայց ինքնուրոյն է, և խօսում է մատնաժողովի կազմած ուղերձի խմբագրութեան դէմ։ Որոշվում է ընդհատել վիճաբանութիւնները։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Թիֆլիսի նահանգապետը յայտարարել է, որ նահանգի բանւորների կողմից լիազօրների համագումարը, Պետական Դումայի անդամի ընտրողական լիազօր ընտրելու համար, որ նշանակված էր մայիսի 7-ին, յետաձգված է մայիսի 14-ին։

—

Ապրիլի 30-ին Թիֆլիսի Դումայի զանգիճում կայացաւ Թիֆլիսի գործարանների, արդարանների և արհեստանոցների լիազօրական ժողովը Պետական Դումայի ընտրողներ ընտրելու համար։ 24 լիազօրներ միաձայն ընտրեցին անդրկովկ. երկաթ-գլխաւոր արհեստանոցի բանւոր, սոցիալ-դեմոկրատ Ստ. Կիրիլովին։ Ժողովը որոշումից ծագմանարութիւններով ողջունեց ընտրութիւնը։

—

Թիֆլիսի արմատական կուսակցութիւնը և նրա հետ բլոկ կազմողները հրաժարվել են պաշտպանել Հաւրաթի անտեսական մասնաժողովի կազմած ընտրողական թեկնածուների ընդհանուր ցուցակը։

—

Գօրիում սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը առաջարկել է ընտրողի թեկնածութեան համար Լազարեան ճեմարանի պրեֆեկտ լեզուների ուսուցիչ պրոֆեսոր Ա. Ս. Խախանովին։ Ընտրութիւնները նշանակվել են մայիսի 5 ին։

—

Վլադիկավկազում ընտրողական ընտրութիւնների ժամանակ յաղթութիւն է տարել սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը։

—

Թիֆլիսի Պետական Դումայի նահանգական ընտրողական մասնաժողովը հաստատել է քաղաքային վարչութեան կից հաստատված ատատիքական բիւրոյի Թիֆլիս քաղաքի համար կազմած ընտրողական ցուցակները։

—

Երևան, 3 մայիսի։ Մայիսի 2-ին նշանակված էին Պետական Դումայի ընտրութիւնները, որ անցան խաղաղ։ Հայերից հաւանօրէն կընտրվի Բասակ Մելիք-Ադամանդոյն և իր եղբայր Յովհաննէսը՝ որը ներկայ քաղաքագլուխ է, իսկ Թուրքերից Միր-Աբբաս-ադա և Ադալեան։

—

Թիֆլիսի 10-րդ քաղաքամասում ընտրողների թիւը որոշվել է 6,552. նրանք պէտք է ընտրեն 12 հոգի։

ՄԱՄԱՌԷ

—

Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագրի ապրիլի տետրի մէջ տպված կենսագրական մի յօդուածից տեսնում ենք, որ Ունգարիայի և Տրանսիլվանիայի Բժշկական Ակադէմիան ունեցել է իր մէջ բազմաթիւ նշանաւոր հայ բժիշկներ։

«Հունգարիայի ու Դրանսիլուանիայի բէ-ժշկութեան կամարը՝ հայ ազգին շատ բան պարտական է,—որովհետև բազմաթիւ նշանաւոր ու անուանի անձնաւորութիւններ ընդունած է այս ազգէն։ Որուն գաւակները՝ կարծես թէ բնութիւնն արտաքոյ կարգի սրամտութեամբ զգեստաւորած՝ բան մասին՝ անձուկ մտօք ասնուած բժշկութեան ու բան մասին՝ ուրիշ գիտութեանց ճիւղերուն մէջ՝ իրենք զիրենք վերջի ատիճանի նշանաւորած ու համակրութեան և հաճարակաց օգտին համար ցուցուցած գործունէութեանց մէջ՝ այնպէս աշխարհածանօթ եղած են։

Մեծ անուն ունին մեր ազգին անցած դարուն բժիշկներուն մէջէն մասնաւորապէս, Դր. Մարտինոս Զաւասեան, Բուդապէշտի համալսարանին ուսուցիչն ու վարիչը. որուն գործունէութիւնն ու արժանիքը այսօր ալ անմոռանալի կերպով՝ ամենուն միտքերուն մէջն է։—Դր. Աւդոստինոս Էօզվէշ (Ոսկերիչեան). հռնգաբաղան ախտէներին անդամը։—Դր. Ասատուրեան Աբրահամեան, աշխարհածանօթ վիրաբոյժը (operateur). Գրազդեան բժշկական-վիրաբուժական հիմնարկութեան ուսուցիչը։—Դր. Փրանկիսկոս Զիֆրայեան (Զարդարեան) Հիրդլի երեսի աշակերտը՝ հռչակաւոր անդամոլոգը (anatomus) ու Գրազդեանի համալսարանին անդամահատութեան բժիշկը։—Դր. Գրիգոր Բաղրատեան, Բուդապէշտի բժշկապետն և համալսարանին առանին (privat) ուսուցիչը։—Դր. Կոստասու Վրդարեան, Բուդապէշտի մերձաւոր Մարկ գ. Սիկէդի բաղանեաց բժիշկը։—Դր. Յովհաննէս Վրդարեան՝ կերլյայի շատ տեսանի բժշկապետ. որ մեծ ասանձնաշնորհութիւններու և պատիներու արժանացաւ։

Նորագոյններուն ու դեռ ապրող բժիշկներուն մէջէն՝ կը յիշենք միայն, դիր. Ֆասուսեանցը Վոլֆեանը՝ Եգեսարեանցը՝ Գրիգոր Սէնգ Մէքլուշի.—Դր. Գէորգ Նոմվարեան՝ Մարամարուշ Սիկէդի՝ արքունական գանձուն բժիշկ.—Դր. Անդրէաս Լէնկէյլեան՝ Սոգոսեանէ Գրազդեան.—Դր. Յովհաննէս Թարչյանի՝ Գրազդեան.—Դր. Յուլիոս Բօբեան, Կրօսվարասյան՝ ազգային զօրաց հանգարտեցուցիչ ազգ բժիշկները. և այլն և այլն—ու վերջապէ

թիւնաբութեամբ ընդունեցինք այդ ալէկոծութիւնները, սրավէտեան բոլորս էլ լցված էինք նոյնքան վառ յոյսերով, թէ այդ անխուսափելի ալիքներից յետոյ է, որ մեզ համար պէտք է ծագի ազատութեան քաղցր արեգակը։ Յուսացինք և դարձեալ սրտաբուխ սպասեցինք, բայց... նորից յուսախաբութիւն. ազատութեան տեղ մեզ միայն մութը խոստացին և ակնարկներ արեցին, և այդ խոստումներին անմիջապէս յաջորդեցին սոսկալի կոտորածներ, սիրմունք, զինուորական դրութիւն, գեներալ Նահանգապետներ, էկզեկուցիա, վայրագ ջոջոկներ, կողոպտում և ամեն բան, բայց ոչ ազատութիւն։

Այս բոլորից յետոյ, գնդակների տարափի ու ալիքների շառաչիւնի տակ մենք մտանք Պետական Դումայի ընտրութիւնների շրջանը։ Այս անգամ այլ ևս մենք բոցավառված չէինք այն յոյսերով, արդէն բաւականին փորձվել ու սկեպտիկ էինք դառել, բայց և այնպէս նորից սաստկական զրոյցներ մեզ էինք, նորից անհամբերութեամբ սպասում էինք, թէ ինչ կունենան ընտրութիւնները։ Մեր բոլոր սպասածների հակառակ, ընտրութիւնները աջով անցան. խուլիգանական պատգամաւորները, շատ քիչ բացառութեամբ, ամեն տեղ պարտութիւն կրեցին, յաղթութիւնը ազատամիտներին մնաց։ Այդ հանգամանքը մեզ նորից փոքր ինչ ոգեորեց և մենք նորից սկսեցինք մեր մէջ զանազան յոյսեր փայփայել։

Այսօր Պետական Դուման արդէն գումարված է ու մենք աչքերս յառած անհամբերութեամբ սպասում ենք, թէ ինչ պէտք է անի նա, ինչպէս պէտք է իրագործի ազատութեան կոչը, անվերջ կռիւերից ջարդված ու յոգնած ժողովրդի յոյսերը։

Սակայն, ընթերցող, որպէսզի մենք նորից չը հիասթափվենք ու գառը յուսախաբութեան մէջ չընկնենք, եկէք մի լաւ մտածենք ու լուրջ կերպով քննութեան առնենք, թէ ինչ անելիքներ ունի Պետական Դուման, ինչ պայմաններ մէջ է նա գրված և ինչ կարող է անել։ Չէ՞ որ Դումայի մի քանի հարիւր անդամները ամենակարող աստուածներ չեն, որ կարողանան ի չը գոյէ աշխարհք ստեղծել։ Բայց նրանք, իսկապէս, ի չը գոյէ շատ ու շատ բան պէտք է ստեղծեն։ Աւելին կասեմ. աշխարհքի ստեղծագործութեան ժամանակ ոչ մի արգելութիւն կամ դիմադրող զօրութիւն չը կար, այնինչ Պետական Դումայի առաջ կանգնած է մի շատ զօրաւոր բիւրոկրատիա իր ահեղ բանակներով, որոնք ժողովրդի հետ կռանալ անել բոլորովին չեն սիրում։

Նայենք հիմա, թէ ժողովուրդը ինչ է սպասում Դումայից։ Նա սպասում է, որ Դուման ամենայն պէտք է իրագործի այն ազատութիւնները, որ խոստացված էին անցեալ հոկտեմբերի 17-ի մանիֆէստում։ Այդ խոստումները թէև չափազանց մշուշապատ էին, բայց և այնպէս նրանց մէջ մի քանի կէտեր բաւական որոշ էին։ Այդ կէտերից ամենագլխաւորն այն էր, որ Ռուսաստանը պէտք է ունենար ժողովրդի ներկայացուցիչներից կազմված օրէնսդիր ժողով, որը իրաւունք պէտք է ունենար պետութեան համար օրէնքներ մշակել. հիները փոխել, նորերը կազմել։ Այլ խօսքերով՝ մենք պէտք է ունենայինք պարլամենտ, ինչպէս որ ունեն բոլոր սահմանադրական ժողովուրդները, նրան յատուկ բոլոր իրաւունքներով։ Իսկ պարլամենտ կամ օրէնսդիր ժողովի ամենակարևոր իրաւունքները, նոյնիսկ ամենանեղ սահմանադրական երկրներում, շատ պարզ և որոշ են. նախ՝ ոչ մի օրէնք առանց օրէնսդիր ժողովի հաւանութեան ու որոշման չէ կարող դրատարակվել ու գործադրութեան մէջ մտնել։ Երկրորդ՝ օրէնսդիր ժողովը, բացի օրէնքներ մշակելուց, իրաւունք ունի հսկելու, որ իր դրատարված օրէնքները ճշգրտութեամբ գործադրվեն միմիստրները, նահանգապետները, քաղաքապետները, գաւառապետը և այլն։ Այդ կը նշանակէ՝ ով դրանցից մի որ և է զեղծում գործէ, պատասխանատու պէտք է դառնայ ժողովրդի ներկայացուցչական ժողովի առաջ։ Երրորդ՝ օրէնսդիր ժողովը է որոշում, թէ ինչ և ինչ տեսակ հարկեր ու տուրքեր պէտք է նշանակել ժողովրդի վրա և թէ ինչպէս կամ ինչ ուղղութեան ինչ կարիքների վրա պէտք է ծախսել պետական հասոյթները։ Կրկնում ենք, այս երեք իրաւունքները նոյնիսկ ամենաթերագնահատ կամ օրէնսդրական ժողովի ամենաչնչին իրաւունքներն են, հէնց այդ պատճառով էլ, երբ մանիֆէստով խոստացվեց, թէ մենք օրէնսդիր ժողով—Պետական Դումա—պէտք է ունենանք, ամենքն էլ վստահ ու հաւատացած էին, թէ Դուման ունկասած այդ վերոգրեալ իրաւունքներն էլ պէտք է ունենայ։ Բացի դրանից՝ ամենքն էլ նոյնպէս հաւատացած էին, որ օրէնսդիր ժողով հաստատվելով, մեր երկրում վերջ պէտք է դրվի և ինքնակամութեանը, որովհետև սահմանադրական կառավարութիւն և ինքնակալ իշխանութիւն դարձիմնց բոլորովին հակառակ, միմեանց սասակի հակառակ բաներ են։

Բայց, ահա մտենում էր Դումայի գումարվելու օրը և բիւրոկրատիան ճիշտ նրա նախօրեակին ցասկով մշակում և յայտարարում է մի թոյլ ու «պետութեան հիմնական օրէնքներ», որոնք գալիս մի անգամից խորտակում են ժողովրդի բոլոր վերոյիշեալ յոյսերը։ Մենք այդ «հիմնական օրէնքների» մասին արդէն ասելիք ունեցել ենք մի քանի անգամ ընդհանրապէս կերպով խօսելու, բայց արժէ, որ մի քիչ աւելի կանգ առնենք դրանց վրա, որպէսզի, ինչպէս վերևում ասացինք, աւելի լաւ հասկանանք, թէ ինչ կարող է անել Պետական Դուման, ինչ կարելի է սպասել նրանից, և որ վերջը մեր հիասթափութիւնը շատ խոտ չը լինի։

Այդ օրէնքների 55 կէտը ասում է.—«Պետական Խորհրդին և Պետական Դումային իրաւունք է տրվում առաջարկութիւն անել գոյութիւն ունեցող օրէնքները վերացնելու կամ փոփոխութեան ենթարկելու նոր օրէնքներ հրատարակելու մասին, բացի պետական հիմնական orkôfôirներից, որոնց վերաբերեալ նախաձեռնութիւնը պատկանում է միմիայն Կայսերական Մեծութեանը»։

Հէնց այս օրէնքը, ինքը լինելով հիմնական օրէնք, արդէն ինքնուրոյնաբար բացասում է սահմանադրութեան սկզբունքը, որովհետև բոլոր սահմանադրական երկրներում ինքը ժողովուրդը կամ նրա ներկայացուցիչներն են, որ իրաւունք ունեն միայն պետական հիմնական օրէնքները փոխելու։

Պետական հիմնական օրէնքների չորրորդ կէտը ասում է՝ «Ռուսաց Կայսրը ունի բարձրագոյն իշխանութիւն»։ 8-րդ կէտը՝—«Թագաւոր Կայսրին է պատկանում օրէնսդրութեան վերաբերեալ բոլոր խնդիրների նախաձեռնութիւնը»։ 9-րդ կէտ՝—«Թագաւոր Կայսրն է հաստատում օրէնքները, (այստեղ արդէն հիմնական օրէնքների մասին չէ խօսքը, այլ սովորական պարզ օրէնքների), և առանց նրա հաստատութեան ոչ մի օրէնք չէ կարող ունենալ իր գործադրութիւնը»։

Կարծում ենք, այնպէսն էլ բաւական է հասկանալու համար, որ Պետական Դուման զրկված է բոլոր օրէնսդրական իրաւունքներից։ Իսկ եթէ մենք դրա վրա աւելացնենք և այն, որ այդ «հիմնական» օրէնքների մշակողները «Ռուսաց Կայսր կամ Թագաւոր Կայսր» բառերը գործ ածելով, ոչ թէ միայն Թագաւորի անձնաւորութիւնն են ի նկատի ունեցել, այլ հէնց իրանց—ամբողջ բիւրոկրատիային, այն ժամանակ վստահութեամբ կարելի է ասել, որ մեր հեռաւոր երկրում Պետական Դումայով գեռ համարեա թէ ոչինչ չէ փոխվել ու մենք գեռ շատ հեռու ենք սահմանադրական երկիր լինելուց։

Մեր հարգ ու մի վէրքերին մենք անհամբերութեամբ զարման ենք սպասում Պետական Դումայից։ Մենք հաստատուն օրէնքներ ենք սպասում մամուլի, խօսքի, խղճի ազատութեան մասին, գումարումների, ժողովների կազմելու, ընկերութիւններ հիմնելու կատարեալ ազատութեան մասին։ Մենք հաստատ օրէնքներ ենք սպասում աշխատանքի և գործադրելի ազատութեան մասին, բոլոր ժողովուրդների իրաւունքները հաւասարեցնելու մասին, մեր անձն ու բնակարանը անձեռնմխելի լինելու մասին։ Մենք սպասում ենք, որ Պետական Դուման վերջապէս խոստովանեցնի ու անգրագրութիւն կը մոցնի չարաբաստիկ ամբողջ Ռուսաստանի մէջ, որ նա շուտով մի ջոջոցներ կը գտնի մեր երկրի քաջայայտ տնանութիւնը վերականգնելու, որ անհող գիւղացիները հող կունենան, բանւորները աշխատանք մարդասիրելի օրավարձով ու սանմանափակ ժամերով. մի խօսքով՝ շատ ու շատ բաներ ենք սպասում Պետական Դումայից, իսկ նա էլ, ինչպէս տեսանք, չորս կողմից կաշկանդված է «հիմնական» օրէնքների ամենապինդ թելերով։

Ուրեմն, ընթերցող, ի զուր չեն մեր յոյսերը, չափազանց չեն մեր սպասելիքները և միթէ կանխակալ չէ ասելը թէ՝ Պետական Դումայի գումարվելովը մենք արդէն փակեցինք մեր հաշիները բիւրոկրատիայի հետ ու թող այսուհետև Դուման ստեղծագործէ ամեն ինչ։ Կրկնում ենք, Դումայի մի քանի հարիւր անդամները ամենակարող աստուածներ չեն։ Ձիրք է, նրանց վրա շատ ծանր ու պատասխանատու գործ է ընկած և նրանց բանելիքը ընթացքից շատ բան է կախված, բայց և այնպէս նրանք առանց իրանց ընտրողների, առանց ժողովրդի ազգայնութեան, համարեա թէ ոչինչ չեն կարող անել։ Հետևապէս, չափաւորելով մեր սպասելիքները, գիտակից լինենք մեր ապագայ անելիքներին ու չը մոռանանք, թէ մեր ապատագրութեան գործը արդէն վերջացած է։ Նա գեռ նոր է սկսվում։

Ա.-Ազատ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրօպոլ, ապրիլի 29-ին Թոնարտարար խնդրում եմ «Մշակի» յարգելի խմբագրութիւնից տեղադրելու թերթի մօտակայ էջերից մէկում հետևեալ երկտողը.

«Մշակի» 90-րդ համարում լոյս տեսած թղթակցութիւնը Ալէքսանդրօպոլից տեղական «խոնարհագոյ վարկի ընկերութեան» ընդունելութիւններ մասին առաջ է բերել մի տեսակ խրատում իմ դէմ որոշ շրջաններում և մասնաւորապէս գրոյցի աշակերտների կողմից (որոնց մասին յիշված է այդ նոյն թղթակցութեան վերջում), իբրև «Մշակի» թղթակից։

Ճշմարտութիւնը վերականգնելու համար, շրջագրավորէն յայտնում եմ, որ ես չեմ վերոյիշեալ թղթակցութեան հեղինակը և որ ասվորութիւն չունեմ առհասարակ ծանկանուան տակ մտնելու։

Ռուսուցիչ՝ Սարգիս Իսահակեան

Պետերբուրգ, ապրիլի 11-ին

(Շարունակութիւն)

Թէ ինչու Գուրջեանը իր հաշում Գէօրգեվսկից գնած 78 ր. 20 կ. մոմ է յիշում միայն և այն էլ իբր թէ նա գնել է գործադրելի ժամանակ, դա էլ ի հարկէ պարզ է և հասկանալի։ Իսկ եթէ նա իսկապէս բոլորովին խուսափէր Գէօրգեվսկում գնած մոմերի մասին իր հաշուի մէջ յիշելուց, այնուամենայնիւ վերոյիշեալ թեամբնեները գալիս են լուծելու այդ հանելուկը։

Որ Գուրջեանը խուսափում է իր հաշիներում Գէօրգեվսկից գնած մոմերի մասին յիշելուց, դա էլ ունի իր պատճառը, որովհետև թեմիս հոգեոր բարձր իշխանութիւնը միշտ արգելում է բացի Ասարեանի թեմական մոմերի պահեստից, ուրիշ տեղերից մոմ չը գնել, ի նկատի ունենալով, որ այդ վոգով մտադրութիւն կայ հիւսիսային Կովկասում թեմական դպրոց բաց անել։

գ) Անցեալ ամառ դպրոցական շէնքի վերին յարկը վարձու է տրվում մի տիկնոջ 450 ր., 250 ր. ստացվում է, իսկ մեզակալը ոչ. (միջնորդի ասելով 200 ր. ստացել է քահանան, որովհետև այդ ընակարանի երկու թէ երեք սենեակը բանել էր քահանայի անձնական ընտանիքը). այն ինչ վարձողը ամբողջ ամառ ապրելով յիշեալ ընակարանում, հեռանում է։

Ով պէտք է վճարի այդ 200 ր. եկեղեցու վնասը, եթէ ոչ Գուրջեանը, քանի որ նա բնակարանը վարձու է տալիս առանց որ և է գրաւոր պայմանի։

Անցեալ ուսումնական տարին դպրոցի համար Գուրջեանը շինել է տալիս իր գործարանում 1 հատ գրատախտակ 30 ր., և 15 հատ էլեկտրանեներ, հատը 12 ր. 50 կ., այն ինչ այս տարի դպրոցի հոգաբարձութիւնը շինել է տալիս մի հնուռ արհեստաւորի նոյնանման, նոյն մեծութեան և նոյն նիւթից երկու գրատախտակ հատը 12 ր., իսկ նոյնպէսի նստարաններ, որպիսիք շինել է տուել Գուրջեանը, յիշեալ արհեստաւորը համաձայնվում է շինել 8-ական ռուբլով։

Այսպէս 1 գրատախտակի և 15 հատ նստարանների համար, որոնց գինը 132 ր. երեց փոխ Գուրջեանը մեր եկեղեցուց ուելի է վերցրել ուրիշների գնմաց 85 ր. 50 կ.։ Ուրեմն այս բանից յետոյ հասարակութիւնը ուներ իրաւունք կասկածով վերաբերվելու Գուրջեանի մեր եկեղեցուց ստանալիք 2000 ր. պարքին։

Այսպէս մինչև այսուհետև մենք մի բնորոշող դէպք, որ տեղի ունեցաւ փետր. 4-ի ծխական ժողովում, որ մտիկ անելիքներ ունի մեր եկեղեցու շինութեան գործի ու նրա հաշիների հետ և որը սակայն, մինչև օրս շնորհիւ մեր եկեղեցու կրեդիտորների կամայականութիւնների մացել է անուշադիր։

Երբ կարդացվում էին եկեղեցու ունեցած պարքերի հաշիները, մի տիկին, որը իբրև հասարակական գործիչ մեզանում յայտնի է, պահանջեց ժողովի քնութեան առաջարկել նախկին երէցփոխների օրօք կանոնց մէջ հանվանակված չքաւոր աշակերտների օգտի համար, փոխութեամբ վերցրած և եկեղեցու շինքերի վրա գործ դրած 1000 ր. գումարի և նրա տոկոսների հաշիը։ Տիկնոջ ձայնը ազդումեցրը խելոզվեց նախագահի կողմից, իսկ նախկին երէցփոխ պ. Սվեշնիկեանը միանգամ առարկեց, որ «այդ փողի վրա վաղուց խաչ է քաշած...» Ով է խաչ քաշել և ինչու, ոչ ոք չը բարեհաճեց բացատրութիւն տալ։

Վերոյիշեալ ծխական ժողովների վերջում հէնց ինքը Գուրջեանը պարզորէն խոստովանվեց իր անընդունակութիւնը ասելով, որ ինքը տարվա ընթացքում կանոնաւոր հաշիւ պահել անկարող է, հետևաբար սպասելի էր, որ նա ինքնասիրութիւն ունենարհեռանալու ասպարէզից, եթէ նա իր սեփական դատողութեամբ առաջնորդվէր, սակայն նրա բարեկամները արդի ծռապատութիւն են մատուցանում նրան, խորհուրդ տալով չուղարկել վիճակային կոնսիստորիա եկեղեցու հաշիները, որովհետև ասա երբոյդ ամիսն է ինչ՝ որ վերջին ժողովների արձանագրութիւնը հրատարակ չեն հանում և չեն ներկայացնում ժողովրդին ստորագրելու։

Այդ պարոնները Գուրջեանի հաշիների այլանդակութիւնը վարագուրելու համար մտածել են դիմել մի կեղտոտ միջոցի, այսինքն յանցանքը փաթաթել այն անհատների վրայ, որոնք մերկացրին հասարակութեան առաջ Գուրջեանի անպէտքը և անընդունակ լինելը, խռովարար հրատարակելով նրանց, իսկ և իսկ նման բիւրոկրատական ոգի յայտնի մեզանայութիւններին, որոնցով քիչ շատ մարդկօրէն մտածող անհատները կրամոլինելու են համարվում։ Նրանք կազմում են մի անբաստանագիր և շրջեցնում քաղաքիս մէջ՝ առաջարկելով ամեն մի պատասխանատու մարդ ստորագրել, լինի նա ծխական թէ ոչ ծխական, գրագէտ թէ անգրագէտ։ Շատ անգամ դիմելով ստայգ պատմութիւնների ստորագրութիւններ կորզելու համար, խուսափելով իսկական բովանդակութիւնից։

Մեր բարի խորհուրդն է պարոններին, փոխանակ պատէ պատ ընկնելու, սոսը միջոցներով, սպանիչներով ստորագրութիւններ հաւաքելու՝ իրանց ոգորմելի ևսը պաշտպանելու համար, աւելի լաւ կանէին, որ բոլորովին հեռանային ասպարէզից և պարզական կամ եկեղեցական գործերի կառավարութեան գեղը յանձնէին ձեռնհաս անձանց։

Թող հոգեոր իշխանութիւնը պահանջէ երկրփոխից 1905 թւի եկեղեցու ել և մուտքի հաշուեքննութեան յունվարի 28-ի և փետրվարի 4-ի ժողովների իսկական արձանագրութեամբ, իսկ Աբրահամ քահանայ Նիխիանին հրամայէ, որ նա հրապարակ հանել ազգասաց և բոլոր գանձանակագրաթերի և թէ մասնաւոր նուէրներից գոյացած գումարների մանրամասն հաշիները սկսած 1902 թւից։

Ալէքսանդր Զաքարեան
Մելիք-Դիւրնապարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փոխարքայի խորհրդին կից հաստատված թիֆլիսում պոլիտեխնիկում բանալու առիթով կազմված առանձին խորհրդակցութեան առաջին նիստը կայանալու է եկող շաբաթ։

Մայիսի 6-ին կովկասեան Փոխարքայի մօտ նշանակված է բառատ։

Ապրիլի 30-ին, երեկոյեան ժամի 5-ից մինչև 7-ը խուզարկում էին Մէյդանի ս. Գեորգ եկեղեցին։ Խուզարկելու ժամանակ եկեղեցու ամբողջ շրջակայքը շրթայված էր զօրքերով։ Եկեղեցին երկրորդ անգամն է, որ խուզարկվում է, թէև ոչ մի անգամ էլ ոչինչ չեն գտել։

Ապրիլի 27-ին, Բաքուի (Դոնի վրա) մօտիկ գտնվող հայոց Խաչվերաց վանքում վիրաւորվել է Վանան վարդապետը։ Մի անծանօթ սուս երիտասարդ մտնում է վարդապետի սենեակը և տալով մէկ բուլի խնդրում է մանրել։ Վարդապետը ոչինչ չը կասկածելով հանում է քսակը զրպանից և ուզում է հանել փողերը։ Այդ րոպէին անծանօթը դուրս է հանում կօշկի ճիթկից մեծ դուր և նրանով սկսում է հարուածել վարդապետի բաց գլուխը։ Այդ միջոցին սենեակում ոչ ոք չէ լինում և չարագործը շարունակում է հարուածել համարեա ուշաթափ վարդապետին, բայց բաղդաւոր պատահականութեամբ յանկարծ ուշքի է գալիս վերջինս, ոտքի է կանգնում և սկսվում է յուսահատ կռիւը։ Ամբոխի վրա ներս է վազում եկեղեցու սարկաւագը։ Վերջինիս տեսնելով չարագործը՝ սկսում է փախչել, բայց սարկաւագը հասնում է նոսին ու բռնում։ Չարագործը ուզում էր դանակով հարուածել սարկաւագին, բայց հասնում են եկեղեցու ծառաները, և աջողվում է բռնել։ Սարկաւագի հետ կռուելիս նա ինքն էլ է վիրաւորվում։ Դէպքի մասին խօսքն յայտնում են ոստիկանութիւնը։ Չարագործին կասկածում ու տանում են 5-րդ ոստիկանական մասի վարչութիւնը։ Կասկածվը Օրլովի Նանագիցն է, Վասիլի Կալինին անունով, որ յայտնի բեգիդվիսա է։ Նա ասել է, որ նպատակ չէ ունեցել սպանելու վարդապետին, այլ ուզեցել է խլացնել նրան, որպէսզի ինքը ազատ կարողանայ գողանալ գրամարկղի փողերը և նա արդեալ չը լինի իրան։ Ցանցաւորը ուզարկվել է տեղական նահանգական բանտը։ Վիրաւոր Վանան վարդապետին բժշկական օգնութիւն են հասցրել վանքում, բայց վէրքերի վատնալու լինելու պատճառով նրան ուղարկեցին քաղաքային հիւանդանոցը։ Ինչպէս պարզվեց յետոյ, Կալինինը վանքում մենակ է եղել, չէ ունեցել իր հետ ուրիշ ընկերներ—մասնակցողներ, որով նա սպանում էր իր զոհին կուելու ժամանակ։

Թիֆլիսի գործակատարների ընկերութեան նախագահը հարց հարուցեց Թիֆլիսում բաց անելու առևտրական դասընթացքներ։ Մօտ ապագայում կը կայանայ ընկերութեան անդամների ընդհանուր ժողով—այդ հարցը քննելու համար։

Վաղը, մայիսի 6-ին Թիֆլիսի նահանգական դատարանի սենեակ ուղևորվում է Ախալքալաք քաղաքը։ Ախալքալաքում նիստերը կը սկսվեն մայիսի 8-ին և կը շարունակվեն մինչև մայիսի 13-ը, իսկ մայիսի 15-ից մինչև 19-ը նիստեր կը լինեն Ախալցխայում։

Ապրիլի 29-ից Քութայիսում վերացվեց պաշարողական դրութիւնը և ժողովուրդը հնարաւորութիւն ստացաւ գիշեր ժամանակ տանից դուրս գալու։

Ադէսեանների օգտին ստացանք Անուշաւան Ղազանճանից (Խարբին) 10 ռուբլի։

Երեքշաբթի, մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին Յովհաննեան գրոցի շինութեան մէջ կայացաւ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի շարունակութիւնը։ Նախորդ ժողովում ընտրվել էին վարչութեան անդամներ—տ. տ. Մ. Խաչատեան, Ղամբարեան և Ծուրենեան։ Այդ ժողովում կատարվեցին վարչութեան փոխանդամների և վերատեսչող յանձնաժողովի անդամների ընտրութիւնը։ Ժողովին մասնակցում էին ընդամենը 25 անդամ։ Զայների առատութեամբ ընտրվեցին վարչութեան փոխանդամներ—տ. տ. Մարիամ Լիսիցեան, Հ. Դաւթեան, Մանանդեան, Յարութիւնեան և Ղարաճեան, իսկ վերատեսչող յանձնաժողովի անդամներ—տ. տ. Ս. Արզումեան, Աւետեան և Աֆեանդիլեան։ Ապա ժողովը զբաղվեց ընկերութեան նոր կանոնադրութեան ծրագրի ընթերցմամբ։ Նոր կանոնադրութեան հարցի քննութիւնը յետաձգվեց մի ուրիշ ժողովի։

Մայիսի 2-ին տեղի է ունեցել հետևեալ քաղաքական միջադէպը. գիմնազիստներ Ս-օվ և Շ-օվ, որոնք այս տարի աւարտում են I գիմնազիան, ֆուտբոլ խաղալիս երեկոյեան ժամի 10-ին վերադառնում էին տուն «Я кузнець удалой» երգը երգելով։ Դաւիթովսկի հրապարակի անկիւնում, Տերտերի տան կողքին կանգնած էին երկու հերթապահ զօրաւորներ, նրանցից մէկը, որի ազգանունն էր Գարպով, ամենակոպիտ եղանակով հրամայեց գիմնազիստներին փողցում չերգել։ Գիմնազիստները չը լսեցին։ Այն ժամանակ զօրաւորը կարպովը մի սատիկ ապտակ տուեց գիմնազիստ Շ-օվին, որը լսելի եղաւ մինչև իսկ հրապարակի հակառակ անկիւնում։ Գիմնազիստները թոյլ կերպով բողոք յայտնեցին, և հնազանդվելով ֆիզիկական կոպիտ ոյժին, զօրաւորների ուղեկցութեամբ գնացին ոստիկանական մասը։ Դաւիթովսկի հրապարակի միւս անկիւնում, Ամմաղովի տան մօտիկ, գիմնազիստների խօսքերին թէ՝ ծեծելու հարկ չը կար, այլ կարող էին միայն ոստիկանմասը տանել, զօրաւորը կարպովը, պատասխանի փոխարէն, մի քանի հարուածներ էլ իջեցրեց երիտասարդ Շ-օվի մէջքին և նոյն իսկ գլխին, ոչ թէ ձեռքով, այլ իր հրացանի կոթով։ Գիմնազիստներին ոստիկանմասը բերելով՝ զօրաւորները իսկոյն հեռացան, իսկ հերթապահ սերժանտի և զօրաւորները չը համարեց արձանագրել այդ փաստը, չը նայելով որ գիմնազիստ Շ-օվի ամբարային վերնաշապիկը և ձեռքերը արիւնոտված էին նրա գլխի վերքերից հոսող արիւնով, որոնք առաջացել էին կատաղութեան հասած զօրաւոր № 58-ի հրացանի հարուածներից։ «Սիր»

Մայիսի 2-ին, ցերեկվայ ժամը 10-ին ձիաքարշի գրաստենակը, որը գտնվում է Մօսկանակի փողոցի վրա, երբ գրաստենակապետ Վիկէնտ Բրբինսկին ձիաքարշի բանուորների հետ հաշիւ էր տեսնում, մտան 5 անայտ դիմափոխված տեղացիներ և սպառնալով տարբանանով, Բրբինսկուց խլեցին 400 ռուբլի փող և վազեցին փողոց ու անյայտացան։ Կողոպուտի ժամանակ գրաստենակում գտնվում էին տրամվայի 5 բանուորներ, որոնք տեսնելով չարագործների ձեռքին տարբանակ, այն ստիպեցին վարդապետին, այլ ուզեցել է խլացնել նրան, որպէսզի ինքը ազատ կարողանայ գողանալ գրամարկղի փողերը և նա արդեալ չը լինի իրան։ Ցանցաւորը ուղարկվել է տեղական նահանգական բանտը։ Վիրաւոր Վանան վարդապետին բժշկական օգնութիւն են հասցրել վանքում, բայց վէրքերի վատնալու լինելու պատճառով նրան ուղարկեցին քաղաքային հիւանդանոցը։ Ինչպէս պարզվեց յետոյ, Կալինինը վանքում մենակ է եղել, չէ ունեցել իր հետ ուրիշ ընկերներ—մասնակցողներ, որով նա սպանում էր իր զոհին կուելու ժամանակ։

Մայիսի 2-ին, երեկոյեան ժամի 5-ից մինչև 8-ը, պահակները Միքայէլեան և կայարանում գծերի վրա խուզարկում էին էլէքտրաքարշով գնացողներին։

Մայիսի 3-ին Նաթլուղում, քաղաքային սպանդանոցում գտնվող 14 տարեկան Իլիկօ Հօշկարեվի և 11 տարեկան Գարաս Էբիտաշվիլի դէպի Լօշկարեվը դանակ գցեց, վիրաւորելով վերջինին աջ ազդրից։ Զինուորական հիւանդանոցի բժշկի տեսելով վէրքը ծանր է։

Ապրիլի 30-ին, ցերեկվայ ժամը 3-ին Քութայիսում մեծ կարկուտ եկաւ, որը տևեց 10 րոպէ։ Կարկուտը այնքան խոշոր էր, որ այգիներին և ծառերին առապին վնաս պատճառեց։ (Շրօմա)։

—

Մայիսի 21-ին Մօսկվայում նշանակված է կայսրութեան համայն ազնուականներից հաւմագումար՝ որը պիտի զբաղվի դասակարգի վերաբերեալ մի քանի խնդիրների քննութեամբ։

—

Ապրիլի 27-ին, առաւօտեան ժամը 11-ին, Պետերբուրգում, Կօսօյ գծի վրա միանգամ սկսվեց, որը տևեց մօտ 3 ժամ։ Համարեա թէ բոլոր ժամանակ խօսում էր մի հատախօսանաւոր, որը իր կրկնատ ճառի մէջ ընդարձից գործի ներկայ վիճակը, մատնացոյց արեց Դումայի պահանջութիւնների վրա, ապացուցելով, որ բանւորները ոչ մի յոյս չը պէտք է գնեն։ Ժամը 2-ին մօտ ամբոխին միացան Բալտիական գործարանի բանւորները և ամբողջ բազմութիւնը, շարունակ «долой» (թող կորչի) աղաղակելով և յեղափոխական երգերով գնաց դէպի Մեծ պրոսպէկտ։ Կարմիր դրօշակ չունէին, բայց ամբոխի առջևից գնում էր մի բանւոր ոտից գլուխ կարմիր հագած։ Այդ ժամանակ կօզակները եկան, բայց, տեսնելով, որ ամբոխը գնաց դէպի Դալերնի նաւահանգիստը, հեռացան դէպի հակառակ կողմը, ոչ մի միջոց ձեռք չառնելով։ (Рус. Вѣд.)։

—

ՇՈՒՎԱԼԻԵՐԻՑ մեզ գրում են. «Երկրագործներից յետոյ սկսվել են յորդ անձրևները։ Եթէ տասն օր էլ անձրևներ չը լինէին, պէտք է զրկվինք հացաբոյսերից։ Այդպիսիներն այս տարի միջակ բերք են խոստանում, թէև անձրևներն արգելում են բժշկութիւնը։ Ալիւրի պուդը ծախվում է 1 ր. 50 կ. գարին 80 կ., պանիրը՝ 5 ր. 50 կ., իշ ը ընդհանրապէս չը կայ, մսացու անասուններն էլ սատիկ թանգ են։ Անձրևներից յետոյ, այժմ գարնանային հրանալի եղանակ է Շուլաւերում։ Խոտերը փոթամացել են, ծառերը, ծաղիկները կանաչել։ Գարնանագարդ բնութիւնը հմայում է վհատված գիւղացու սիրտն ու հոգին դէպ իր ծոցը աշխատանքի։ Տեսնենք թուրքերը նրա վարը, ցանքը, աշխատանքը հաջող են անում այս տարի»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մայիսի 2-ին, գիշերվայ ժամը 10-ին, Բաղրատիոնովսկի փողոցում, Ռուշանի տան դիմաց մի անյայտ չարագործ՝ Սպանիի բնակիչ Գաբրիօ Զուբարաշվիլուն կրծքի ձախ կողմից մահացու վէրք հասցրեց։ Վիրաւորվածը ուշքի չը գալով և չը յայտնելով իրան վիրաւորողի անունը, մի քանի րոպէից յետոյ վախճանվեց։ Զարգարծը կարողացաւ փախչիլ Շնորհիւ 3-րդ քաղաքամասի ոստիկանութեան ձեռք առած միջոցների չարագործը ձերբակալվեց։ Նա Քութայիսի բնակիչ Ալէքսէյ Քաֆարովն է՝ արհեստով հիւսն։ Քաֆարովն խոստովանեց իր գործած յանցանքը, յայտնելով, որ նրանց մէջ վէճ է ծագել, որից յետոյ Զուբարաշվիլուն ֆիզիկական դանակով կուրծքից վիրաւորեց, իսկ դանակը ձգեց Կուր գետը։ Ձերբակալված Քաֆարովն բանտարկված է Մէյանի բանտում։

Ս. Անանովի ներկի բանութից (Պուշկինսկի փ.), կողոպտով կողոպտող, գողացել են 250 ր. զանազան տեսակ ներկեր և կասայից 3 ր 50 կ. փող։

—

Մայիսի լոյս 3-ի գիշերը Մելիքյէլեան փողոցում Աստվարատ Շանդարակեանի նպարեղէնի խանութից անայտ չարագործները գողացել են 4 արկղ թէյ, 1 տոպրակ շաքարաւազ, 1 հատ ռսկէ մատանի և 2 ր. 40 կօպ. կանխիկ դրամ, ընդամենը 621 ռուբլու արժողութեամբ։

ԱՐՏԱՔԻՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Անգլօ-ռուս յարաբերութիւններ.—Հեղինակաւոր աղբիւրներից բղխած լուրերի համաձայն, ասում է «Matin»-ը, այս րոպէին Անգլիայում տիրում է հասարակական կարծիքի մի ուժեղ հոսանք ի նպաստ անգլօ-ռուս մերձեցման։ Երկու երկրների դիւանագէտները ստեղծելու վրա են աշխատում, այսպէս ասած, մի նպաստաւոր մթնոլորտ այդ մերձեցման համար, ինչպէս այդ ցոյց են տուել դիպլոմատիական գործունէութիւնները, այս վերջին ժամանակներումս, մանաւանդ Աւժեղրաստում։ (Այդ մերձեցման պերճախօս ապացոյցներից մէկն է Անգլիայի մամանակցութիւնը ռուսական նոր փոխառութեան)։

Մերձեցման այդ ոգին երևան է գալիս արդէն կ. Պոլսում այն վիճաբանութիւնների մէջ, որ մղվում են ներկայումս Թիւրք-պարսկական անհամաձայնութիւնների առիթով։

Ռուսաստանի ներքին դրութիւնը այս րոպէիս շատ խառն է. պէտք է ասենք Դումայի գումարումին, որպէս զի բարեկամական այդ զգացմունքը աւելի որոշ ձև ընդունէ երկու երկրների մէջ։ Եւ սակայն, անկասկած է, որ այդ զգացմունքը շատ իրական, շատ զգալի քնութիւն է կրում և տեսնվիք կայ յուսալու, որ այդ բարեկամական արտայայտութիւնները նպաստաւոր արդիւնքներ կարտադրեն, և երկու երկրների յարաբերութիւնների, և համաշխարհային խաղաղութեան տեսակէտից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Կոմիսիայի կազմած պատասխան - ուղերձի բնագրի նախագիծը հետևեալն է. «Զերդ Կայսերական Մեծութիւն! Զերդ Մեծութեան հաճելի եղաւ ժողովրդի ներկայացուցիչներին ուղղած Ձեր ճառի մէջ յայտնել, որ Դուք վճռել էք անեխտա պահել այն կարգադրութիւնները, որոնցով ժողովուրդը կոչվում է, միացած իր Միապետի հետ, ստանձնել օրէնսդրական իշխանութիւնը Միապետի կողմից ժողովրդին տուած այս բացարձակ խոստումը՝ Պետական Դուման համարում է մի հատատուն երաշխիք օրէնսդրական կարգի ապագայ զարգացման համար, որ համապատասխանում է իսկական սահմանադրական սկզբունքներին։ Պետական Դուման իր կողմից ամեն ջանք պէտք է գործ դնէ կատարելագործելու ժողովրդական

գործադրութեան մէջ կը մտցնի մահվան պատժի վերացնելու օրէնքը։ Գիւղացիական կարիքների պարզաբանութիւնը և համապատասխան օրէնսդրական միջոցների ընդունելը՝ պէտք է կազմէ Պետական Դումայի ամենամօտ խնդիրներից մէկը։ Երկրի ազգաբնակութեան ամենախոշոր մասը, աշխատաւոր գիւղացիութիւնը անհամբեր սպասում է, որ բաւարարութիւն տրվի իր կողմից սպասվող հողի մեծ կարիքին։ Եւ ռուսական առաջին Պետական Դուման կատարած չէր լինի իր պարտականութիւնը, եթէ չը հրատարակէր օրէնք բաւարարութիւն տալու այդ կենսական պահանջին. այն է՝ պետական ուղեվի, արքունական, վանական և կալուածատիրական բոլոր հողերը յատկացնել այդ զգացվող կարիքը լրացնելու գործին։ Պետական Դուման անհրաժեշտ է համարում նոյնպէս ժշակել օրէնքներ, որոնց հիման վրա գիւղացիները հնարաւորութիւն ունենան օգնելու վերացնել նրանց վրայից կամայականութեան և խնամակալութեան լուծը։ Պետական Դուման նոյնքան անյետաձգելի է համարում և քանուոր դասակարգին բաւականութիւն տալը. առաջին քայլն այդ ուղղութեամբ այն կը լինի, որ վարձու քանուորների նիւթական և հոգեկան բարեկեցութիւնը բարձրացնելու համար կապահովեն կազմակերպվելու և ինքնագործունէութեան ազատութիւն աշխատանքի բոլոր ճիւղերում։ Պետական Դուման իր պարտքն է համարում նոյնպէս գործ դնել բոլոր ջանքերը ժողովրդի լուսաւորութեան մակերեսոյթը բարձրացնելու և ամենից առաջ նուազագոյն ընդհանուր ընտրողական իրաւունքի մասին։ Պետական Դուման անյետաձգելի հարցերից մէկն է համարում նաև, որ անհրաժեշտ է լուծում տալ առանձին ազգերի հասունացած պահանջներին։ Ռուսաստանը մի պետութիւն է, ուր ապրում են բազմաբան ցեղեր ու ժողովուրդներ. այդ բոլոր ցեղերի հոգեկան միացումը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ նրանց իրաւաքանչիւրի պահանջներին բաւարարութիւն կը տրվի։ Պահպանելով և զարգացնելով այդ ցեղերի կենցաղի առանձնայատկութիւնները՝ Դուման հոգատար կը լինի առատօրէն բաւարարութիւն տալ արդարացի պահանջներին։ Ձերդ Մեծութիւն, մեր իրաւաքանչիւր աշխատանքի նախադրեալ կանգնած է մի հարց, որն աղմկում է ամբողջ ժողովրդի հոգին, նա աղմկում է և մեզ ժողովրդի ընտրեալներիս և զրկում է մեզ հնարաւորութիւնից խաղաղ կերպով սկսելու մեր օրէնսդրական գործունէութեան առաջին քայլերը։ Առաջին խօսքը, որ հնչեց Դումայի դահլիճում «ներում» խօսքն էր, որն արժանացաւ համակրական բացականչութիւնների։ Երկիրը ծարաւի է լիակատար քաղաքական ներման. նա ժողովրդական խղճի պահանջն է և որը չէ կարելի մերժել և որի իրագործելը չէ կարելի ուշացնել։ Թագաւոր, Դուման Ձեզանից սպասում է լիակատար քաղաքական ներում որպէս առաջին առաւաւտչայ մթութեանց հասկանալու և փոխադարձ համաձայնութեան՝ Ցարի և ժողովրդի մէջ»։

Երբ ընդմիջումից յետոյ սկսվեց քննվել գահական ճառի պատասխան ուղերձը՝ պատգամաւոր Միկլաշէվսկին արտասանեց մի ուժեղ ճառ բարձրագոյն կառավարութեան դէմ, որ ճառախօսի ասելով, ազատութեան հենց առաջին օրը խլեց այդ ազատութիւնը։ Միկլաշէվսկին ասաց. «Եթէ մենք ներում ենք խնդրում ազատագրական շարժումների ժամանակ վնասվածների համար, մենք պարտական ենք խնդրելու՝ պատժելու նաև այն մարդկանց, որոնք ի չարը գործ դրին իշխանութիւնը, այն կառավարիչներին, որոնք հրամայում էին բանտերը լցնել, որոնք կազմակերպում էին պատժական խմբեր և գնդակահարում առանց դատաստանի»։ Նա պատմեց, թէ ինչպէս սպանեցին մի ուսանողի, որը մասնակից չէր ոչ մի շարժման, և միայն այն պատճառով, որ մի ուրիշը իր սեփական կեանքը փրկելու համար մատնիչ էր արել այդ ուսանողին, որպէս մասնակից։ Միկլաշէվսկի յիշեց նաև Գրէէսկուլի օրինակը, որը վերադարձաւ աքսորից միայն այն պատճառով, որ նա ընտրված էր Դումայի անդամ։ Բացի Գրիգէսկուլից նոյն դրութեան մէջ էին պատգամաւորներ՝ Երշով, Ձբրիկով և շատ շատերը։ Նա խնդրեց աւելացնել ուղերձին, որ անհրաժեշտ է կառավարութեան պատասխանատուութեան ենթարկել, որը գերազանցեց իր իշխանութիւնը և նոյնպէս նրա ապօրինի հրամանների կատարողներին։ Միկլաշէվսկուց յետոյ խօսեց Բոգդէլեվը, որը ի միջի այլոց ասաց հեռաւոր. ազգերի լարված դրութիւնը խաղաղացնելու միակ միջոցն այն է, որ երկրի կառավարութեան դեկը ստանձնեն այնպիսի մինիստրներ, որոնք ընտրված կը լինեն հենց իրանց ժողովրդից։ այդ ժամանակ միայն կը ստեղծվի հաւատ և վստահութիւն ժողովրդի և Ցարի մէջ։ (Բուռն ծափահարութիւններ)։ Ապա խօսեց կոմս Պոտոցկին, որը մատնացոյց արեց այն հանգամանքը թէ հողերը ստիպողաբար գրաւելու ժամանակ, պէտք է ի նկատի առնել այն ջանքը, որ թափել են սեփականատէրերը իրանց կալուածների վերաբերմամբ։ Դուման Պոտոցկու ճառն ընդունեց գերեղմանային լռութեամբ։ Ապա խօսելով Բուռնդեվը, ասաց, որ միայն հողերը գրաւելով չէ վերջանում ագրարական բէֆորմը։ Նրան պէտք է հետևի նաև հասարակական յարաբերութիւնների վերակազմութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Բոգդիչէվից յետոյ, որի ճառը ծափահարութիւններով ընդունվեց, խօսեց կոմս Պոտոցկին, որ ցոյց տուեց, թէ հողի գրաւման ժամանակ անհրաժեշտ է ուշադրութեան առնել օրինակելի կալուածատէրերի գործադրած ջանքերը։ Դուման Պոտոցկիի ճառը ընդունեց գերեղմանային լռութեամբ։ Ապա խօսեցին Բուռնդեվը և կոմս Հէյդէնը։ Վերջինս պաշտպանեց ազնուականութիւնը և զէմտվօն, ասաց, որ զէմտվօն ազատագրական շարժման մէջ անագին դեր է խաղացել։ Պետական Խորհրդի վերանորոգութիւնը ցանկալի է, բայց Դումայի հետ միասին դա առաջին քայլն է իրականացնելու ժողովրդական ներկայացուցչութիւնը։ Բիժկովը (Եկատերինօսլաւ) յիշեցրեց, որ ուղերձի մէջ մոռացված է ռուս կինը. ստրկուհու որդին քաղաքացի լինել չէ կարող։ Ժիլկինը (Սարատով) կարծիք յայտնեց, որ ուղերձի մէջ չէ կարելի նկարագրել ժողովրդի ցաւերի ամբողջ պատկերը։ Թող ստորին դասակարգերը վիճաբանութիւններով պարզեն այն, ինչ որ չը կայ ուղերձում։ Սպասօպնին (Եկատերինօսլաւ) խօսում է հակառակ ուղերձի ձևակերպութեան «չէնսուիկների ինքնիշխանութեան վերջը—ամենամեծ չարիքն է» դասակարգային թշնամութեան, նա դէմ է մահվան պատժին։ Առհասարակ նա հակառակ է գործադուլների ազատութեան—այդ կուի մահացու միջոցի դէմ. նա, ընդհանրապէս, ուղերձը շատ խիստ է գտնում։ Սպասօպնինի ճառը յաճախ ազմուկներով ընդհատվում է Նախագահը հրաւիրում է կարգապահութեան։ Մասնոնիուսը (Մինսկ) գտնում է, որ ուղերձը շատ ծրագրային է. ուղերձի գլխաւոր նպատակն է—ամիտտան, որ մթնանում է քաղաքական ծրագրով։ Ալատինը (Սիմբիրսկ) ասում է, որ երբ նա մեկնում էր քաղաքից, ընտրողները պահանջեցին, որ ինքն ասէ, թէ նրանք, քաղաքացիները, ինչպիսի զոհեր տուեցին ազատութեան համար։ Ժողովրդին ազատութիւն է հարկաւոր, որ նա բացի օրէնքներից ոչնչով չը ճնշվի։ Կոմս Հէյդէնի առաջարկութեամբ ժամը 11 և 15 րոպէին նիստը ընդհատվում է մինչև մայիսի 3-ի առաւօտ. ժամը 11-ը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի «Страна»-ն հաղորդում է, որ պարլամենտական ազգային խմբերը վճռել են մի դաշնակցութիւն կազմել՝ Դումայում—երկրային ինքնավարութեան հարցի վերաբերմամբ միահամուռ տակտիկայով գործելու համար։ Այդ դաշնակցութեան կազմի մէջ մտել են այն գերակշռող ազգերը, որոնք կողմնակից են երկրային ինքնավարութեան։—Դումայի գիւղացի անդամների միջնորդութեամբ—բանից 3000 բուլուլ գրաւականով ազատել են վիպասան Պիշէխոնովին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Առաջինը խօսեց Սօմսոնովը։ Նրա կարծիքով ուղերձը բաւականաչափ արտայայտիչ է երկրի տրամադրութեան։ Նա չէ յայտնում միայն պարլամենտի, այլ ամբողջ երկրի, ամբողջ ժողովրդի կարծիքը. իսկ այնքան էլ պարզ չէ ուղերձում, որ ժողովրդին ազատութիւնը նոյնչափ հարկաւոր է, ինչպէս հողը։ Անհրաժեշտ է յիշատակել բարենորոգումների անպայման անհրաժեշտութիւնը, իսկ այդ բանը ուղերձում չը կայ։ Այդ—ամենագեղեցիկ կերպով կը խաղացնէ երկիրը, որն այժմ, ինչպէս մայրը բռնած կոյր Սամսոնը—պատրաստ է ամեն բան ջարդել և ինքն էլ կտոր-կտոր լինել։ Ապա մի ուրիշ պատգամաւոր մատնացոյց արեց, որ անհրաժեշտ է ուղերձը լրացնել մի յաւելուածով, որով յիշվի, թէ ամիտտան տարածվում է ագրարային և կրօնական յանցանքների վրա, քանի որ ուղերձում յիշված են միայն քաղաքական յանցանքները. պահանջել որ ուղերձը կատարեալ ձևակերպվի—ընդհանուր ձայնատուութեան վերաբերմամբ և «առանց սեռի խտրութեան» լրացուցիչ խօսքերով, հողերի գրաւման ձևակերպութիւնը լրացնել «եկեղեցական հողեր» խօսքերով,—այն ժամանակ միայն ուղերձը յայտնելով բարի աւետիք, ինքն էլ անկեղծ աւետիք կը լինի։ Ապա խօսեց Շէչկովինը (Օդէսա)։ Նա սկսեց իր ճառը, առաջարկելով որ ուղերձը չը ստորագրեն նրանք, որ բանութիւնները և պատիժները օրինաւոր են համարում և վախենալով կրամօլայից, պատրաստ են ուղերձը ստորագրել Ռուս Ժողովի ցուցմունքով։ Նրանք, որոնք թոյլ չը տալով նահանջումն մեռած կանոններից, և պէտք է ստորագրեն օրինակարգի կուսակցութեան ուղերձը. նրանք, որոնք գործադուլները և համախմբումները յանցանք են համարում և պաշտպանում են կապիտալի անձեռնմխելիութիւնը և խոշոր հողատերութեան նշանակութիւնը, նրանք, որոնք հողերի գրաւումը համարում են մատնաւոր սեփականութեան իրաւունքի խախտումն, որոնք պատրաստ են ստորագրել առևտրա-արդիւնաբերութեան կուսակցութեան ուղերձը նրանք, որոնք դեռ բարեպաշտութեամբ մատնում են զրանիտային պալատները և սանտիմենտալ կերպով հաւատում են, թէ գայլերը գառներ կը դառնան, որոնք ընդունելով համախմբումը, քննադատում են գործադուլը և կարող են ստորագրել հոկտ. 17-ի դաշնակցութեան ուղերձը։ Իսկ Դումայի ուղերձը թող ստորագրեն այն անձինք, որոնք ընդունում են, որ ժողովրդի ազատութեան գործը բարձր է ամեն մի կառավարութիւնից։ Պալատը պարտաւոր է ստորագրել ուղերձը։ Այժմ երկիրը գտնվում է այսպիսի դրութեան մէջ.—թուլացած ամբարտակը հազիւ է կարողանում պահել կատաղի գետի յորձանքը. հին խնամատարները այդ ամբարտակը դրստում են աղբով, կարծելով թէ կը դիմանայ մի ամբողջ դար ևս. չար ձեռքերը նենգութեամբ բարձրացնում են մերթ այս, մերթ այն սողնակները, հրաձգելով ատիճանաբար ամբարտակը քանդող ջրի փվող պատով։ Դուման բոլոր ոյժերով կաշխատէ բաժանել ջրի մեծ հոսանքները և հին թումբի տեղ նորը կառուցել։ Կազմած ուղերձը Դումայի ապագայ աշխատանքների ծրագրի արտայայտութիւն է։ Եթէ նրա վրա ուշադրութիւն կը դարձնվի և ամբարտակը փշրվի, այն ժամանակ Դուման կասէ «մենք նախազգուշացրինք»։ (Անվերջ ծափահարութիւններ)։ Կուզմին-Կարավայէվը մահվան պատժի դէմ մի գեղեցիկ ճառ արտասանեց։ (Ծափահարութիւններ)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Պետական Խորհրդի այսօրվայ նիստում վճռվեց ընտրել մի յանձնաժողով 18 անդամներից գահական ճառի պատասխանը կազմելու համար, չը տալով նրան առաջուց որևէ ցուցմունքներ ուղերձի բովանդակութեան մասին։

Շէչկովինից յետոյ խօսեց բանուոր Միխայլիչէնկօ (Եկատերինօսլաւ, սոցիալ-դեմոկրատ)։ Նա մատնանիշ արեց բանուոր դասակարգի կարիքների և հարուստ ու աղքատ դասակարգերի միջև եղած անագին տարբերութեան վրա և յայտնեց, որ բանուորները ոչինչ չեն կամենում աւելացնել պատասխան ուղերձին, բաւական է միայն նրա մասին յիշատակութիւն անելը, իրանք բանուորները կը պաշտպանեն իրանց։ Մաքսիմ Կովալէվսկի մի մանրամասն ճառի մէջ մատնացոյց արեց ուղերձի հետևեալ էական այսպէս ասած դեկ ծառայելը լաւ դեկավարի ձեռքում, բայց փոթորիկի ժամանակ, որի մէջ գտնվում ենք մենք, դա բաւական չէ։ Պարլամենտարիզմը ինքն ըստ ինքեան չէ կարող մեզ հասցնել մի այդպիսի նաւահանգիստ, միայն իշխանութիւնը, որը ժողովրդի վստահութիւնը կը վայելէ, որը կը լուծէ միայն ամբողջ ժողովրդի շահերը, որը կունենայ ամբողջ իշխանութիւնը և ամբողջ զօրութիւնը ժողովրդից, միայն այդպիսի իշխանութիւնը կարող է հանել ժողովրդին ներկայ դրութիւնից։ Իւրաքանչիւր օր և ժամ մենք խմանում ենք, որ ժողովուրդը ժամ առ ժամ և րոպէ առ րոպէ սպասում է հայրենիքի նորոգման։ Նա շատ կարելի է գիտակցում է, որ չէ կարելի բոլորը անել կարճ ժամանակամիջոցում, բայց Նրան հարկաւոր են ապացոյցներ, որ նրա բոլոր պահանջները ուշադրութեան կանվին և կը կատարվեն։ Ուղերձում յիշված չէ ագրարային և կրօնական յանցանքների համար։ Վախենում եմ, որ գիւղացիները չասեն. «մեզ մոժիկներիս, էլի մոռացան»։ Թող չը կարծեն, որ ներելով յանցանքները խրախոյս կը տրվի յանցաւորներին։ Յուզմունքները պատճառներն այն չեն, ոչ նրանց մեղմութեամբ են վերաբերվում։ Յիշում եմ 1892 թ-ին, երբ տեղի ունէին խուլերային անկարգութիւններ, այն գիւղացիներին, որոնք այրում էին հիւանդներին և մահացնում էին նրանց։ Այդ գիւղացիները, մեղադրիչները նստարանի վրա նստած, կարծում էին, որ իրանք կը պարգևատրվեն, իսկ զինուորական դատարանը դատապարտեց նրանց կախաղանի և տաժանակիր աշխատանքների։ Նոյնպէս անհրաժեշտ է յիշել, որ գիւղացիները մեղաւոր չեն իրանց արածի համար։ Նրանց շրջապատող բազմաթիւ դէպքերը հասցրին նրանց այդ բանին։ Ահա թէ ինչու համար ուղերձում պէտք է ասել, որ ամիտտան տարածվում է քաղաքական և կրօնական յանցանքների վրա։ Ահա երբ ուղերձում կը շտկվեն բոլոր մանրամասնութիւնները, երբ նա կը ներկայացնէ ժողովրդի բոլոր պահանջները, այն ժամանակ նա կողմնէնէ նրան միաձայն ձիչով և այդ ճիչը կը լսվի ամեն տեղ։ Այստեղ ևս, Նէվայի ափերի վրա պէտք է ընդունվեն շուտափոյթ և վճռական միջոցներ լրացնելու պատասխանատուութեան տեղերում բոլոր պաշտօնական անձանց։ Միայն այն ժամանակ կարող են բաւարարութիւն տանալ ժողովրդի բոլոր պահանջները։» Խօսքը տրվում է Զաբօլօտնոին (Պոդոլսկ)։

3 մայիսի

ԲԱԳՈՒ, 3 մայիսի։ Բագուի քանտում պահպան զինուորի ձեռքով սպանված է մի բանտարկեալ, երբ հրաժարվել էր պատուհանից դուրս չը նայել։

ԲՈՍՏՕՎ-ԴՕՆԻ-ՎՐԱ, 3 մայիսի։ Քաղաքի կենտրոնում 4 անյայտ մանդվանց ձեռքով կողոպտված է մի զինախանութ։ Գողացված է մաուզերի 15 հրացան։

ՄՕՍԿՎԱ, 3 մայիսի։ Իրանց կարիքների վրա ուշադրութիւն դրաւելու նպատակով անգործները պատրաստվում են խաղաղ ցոյց անել։

ՆՈՎՐՕՍԻԲԻՍԿ, 3 ապրիլի։ Բանտից ազատել են քաղաքական 43 բանտարկեալների։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Պաշտօնական։ Պետերգոֆում ներկայացած Միխայլովսկի և Կոնստանդինովսկի թնդանօթաձգային դպրոցների և Նիկոլաևսկի երկրաչափական ուսումնարանի աւարտած իւնկերներին կայսրը դիմեց հետևեալ խօսքերով. «Այս նշանաւոր օրը, պարոնայք, ես ուրախ եմ ձեզ տեսնելով։ Դուք ստացել էք զինուորական լաւ զարգացում և կրթութիւն։ Այն յատուկ ծառայութիւնը, որի մէջ դուք մտնում էք, կը պահանջէ ձեզանից դեռ տոկուն և յամառ աշխատանքի երկար տարիներ, որով թնդանօթաձիգ, հրացանաձիգ և երկրաչափական գործի այժմեան պահանջները լիովին կատարել կարողանաք։ Ես համոզված եմ, որ դուք գործ կը դնէք ձեր բոլոր ջանքերը և ոյժերը մեր թնդանօթաձիգ և հրացանաձիգ զօրքի փառքը պաշտպանելու համար։ Պահեցէք Իմ պատուէրները։ Հաւատացէք Աստծուն և Ռուսաստանի մեծ ապագային, հպատակվեցէք ձեր Թագաւորին և հաւատարիմ եղէք դէպի ձեր պարտքը և երդումը. յարգանքով վերաբերվեք ձեր կառավարիչներին, ընկերաբար՝ իրար մէջ և խիստ արգար՝ դէպի ձեզ ենթակայ զինուորները։ Մտէք զինուորների դրութեան մէջ և ծառայութիւնից դուրս աշխատեցէք մօտենալ նրանց։ Ի սրտէ ցանկանում եմ ձեզ աջողութիւն—ձեզ սպասվող ասպարիզում։ Ձեր օֆիցէրութիւնը շնորհաւորում եմ»։

4 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Պետական Խորհրդի այսօրվայ նիստում վճռված է ընտրել 18 անդամներից բաղկացած մի մանամժողով, մի ուղերձ պատրաստելու—իբրև պատասխան գահական ճառին։

«Օրէնքների ժողովում» հրատարակված է ժամանակաւոր կանոններ, որ վերաբերում են ոչ պարբերական մամուլին։—Ստատս սէկրէտար կոմս Լամզդորֆը 1906 թ. ներկայ է լինելու Պետական խորհրդի նիստերին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկրտաւ. հ.
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեաղդային։
Մ. Դ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԳԱՐԱԳԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՈՆ-ԲԱՅԵՆ Ա. Ի. ՇԶԵՐԲՈՒՐՆԻԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ՆԵՐԿՈՆՆԵՐԸ

Ե. Դ. ԱԲԵԱՆՑ—6—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկանաւ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական ժամադակներով։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱԶԱՌԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—մլաստեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և ելեքտրօ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում մկրօսկոպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և անատոմների (кормилца) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։
(չ.տ.կ.) 52—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաղտասկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղտասկի փողոցից № 2.
(ա. օ.) 140—300

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչյա փող. № 33/15 տ. Մերիժանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 82—100

ԱՏԱՄՆԵՐ
արհեստական, մաքրել, պլոմբ ածել, բժշկել և այլն։ Գր. Մատ. Իսխլէդ. Միխայլով, 90. գերմանական եկեղեցու դիմաց։ Երեխաներին ծառայողներին, ուսանողներին և չքաւորներին զիջումով։ (կ.չ.ու.) 6—15

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36.
(կ.չ.ու.) 9—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վլադիմիրսկայա փողոց № 8։ (Ի.տ.)62—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ԶԱԽԱՐԻԳԵԱՆ
Ներքին եւ նեարվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լէրմօնտովսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 17—50

Հ. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ
ԲԵՐԼԻՆ
Արտաքելի և ներքաքելի ապրանաց և այլ ամեն տեսակ տեղեկութիւնների համար դիմել հետևեալ հասցէով։
H. Andreassian, Berlin—Friedenau.
(ու) 4—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեոնովսկի փողոց № 20։
(ու. կ. ե.) 20—20

Թիֆլիսում վաճառվում են
ՊՐՕՖ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑԻ
հետևեալ աշխատութիւնները.

Ղազար Փարպեցի և գործք նորին, հեռատպութիւն	1 50
Ծրագիր հայ ազգագրութեան (վերջին օրինակները)	» 50
Խորենացու պատմութեան աշխարհաբար թարգ. մասին	» 25
Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան (նորագիւտ), 2 լուսագիր նմանատպ.	2 »
О нѣк. географич. названіяхъ древ. Арменіи	» 25
Армянскій Эпосъ въ исторіи Арменіи М. Хоренскаго, изслѣдованіе и матеріалы	3 »
Армянскіе Аршакиды въ исторіи Арменіи М. Хоренскаго, изслѣдованіе и матеріалы	3 »

Դիմել՝ Կենտրոնական գրավաճառանոց և Թիֆլիս—«ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ» գրախանութը։
(կ.) 4—10

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
լաւ ընտանիքից, ցանկանում է բննայի պաշտօն, գիտէ լաւ հայերէն, ռուսերէն, ծանօթ է և ֆրանսերէնի հետ։ Կարող է ընկերակցել ճանապարհորդելու։
Հասցէս. Ростовъ На/Дону До востребованія Ж. К.
(ե. հ. ու.) 3—3

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱԶԱՌԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—մլաստեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և ելեքտրօ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում մկրօսկոպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և անատոմների (кормилца) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։
(չ.տ.կ.) 52—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաղտասկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղտասկի փողոցից № 2.
(ա. օ.) 140—300

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչյա փող. № 33/15 տ. Մերիժանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 82—100

ԱՏԱՄՆԵՐ
արհեստական, մաքրել, պլոմբ ածել, բժշկել և այլն։ Գր. Մատ. Իսխլէդ. Միխայլով, 90. գերմանական եկեղեցու դիմաց։ Երեխաներին ծառայողներին, ուսանողներին և չքաւորներին զիջումով։ (կ.չ.ու.) 6—15

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36.
(կ.չ.ու.) 9—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վլադիմիրսկայա փողոց № 8։ (Ի.տ.)62—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ԶԱԽԱՐԻԳԵԱՆ
Ներքին եւ նեարվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լէրմօնտովսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 17—50

Հ. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ
ԲԵՐԼԻՆ
Արտաքելի և ներքաքելի ապրանաց և այլ ամեն տեսակ տեղեկութիւնների համար դիմել հետևեալ հասցէով։
H. Andreassian, Berlin—Friedenau.
(ու) 4—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեոնովսկի փողոց № 20։
(ու. կ. ե.) 20—20

Թիֆլիսում վաճառվում են
ՊՐՕՖ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑԻ
հետևեալ աշխատութիւնները.

Ղազար Փարպեցի և գործք նորին, հեռատպութիւն	1 50
Ծրագիր հայ ազգագրութեան (վերջին օրինակները)	» 50
Խորենացու պատմութեան աշխարհաբար թարգ. մասին	» 25
Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան (նորագիւտ), 2 լուսագիր նմանատպ.	2 »
О нѣк. географич. названіяхъ древ. Арменіи	» 25
Армянскій Эпосъ въ исторіи Арменіи М. Хоренскаго, изслѣдованіе и матеріалы	3 »
Армянскіе Аршакиды въ исторіи Арменіи М. Хоренскаго, изслѣдованіе и матеріалы	3 »

Դիմել՝ Կենտրոնական գրավաճառանոց և Թիֆլիս—«ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ» գրախանութը։
(կ.) 4—10

ՀԱ